

ՊԵՏՐՈՎԻ  
ԵԳԱՆԱԳԻՆ  
ԻՐԱԴՐԱՄԱՆ

№ 17-18

№ 17-18

ՆԱՐ-ԳՈՅ

ԱՆԴԻ ՍԱՐՈՎԱԿ,

889

22 NOV 2017

891.542 - 3


ՊԵՏԱՐԱՏԻ ԵՎԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 17-18

№ 17-18

ՆԱՐ-ԴՈՍ

# ԱՆԴԱ ՍԱՐՈՅԱՆ



ՊԵՏԱՐԱՏԻ ԵՎԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՅԵՐԵՎԱՆ

198

Պատ. Խմբագիր՝ Ա. Հարությունյան  
Տեխ. Խմբագիր՝ Ց. Խաչվանյան  
Սըքագրիչ՝ Հ. Մարիկյան

ՆԱՐ-ԴՈՍԸ ՅԵՎ ՆՐԱ «ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ»-Ը

«Դրոշակիս վրա դրված ե յեղել-հեռու  
Բաֆիական հեքիաթաբանություննե-  
րից, կյանքը՝ ինչպես զոր կա և մարդու  
ներքինը»:

Նար-Դոսի նամակներից

Այդպես ե բնորոշել իրեն Նար-Դոսը և չի սխալվել ձիքա ե,  
նա ունի մի շարք բանաստեղծություններ, պատմվածքներ և վե-  
պիկներ, զգոնք այնքան ել հետո չին ոռմանտիկական-բարոյա-  
խոսական հեքիաթաբանություններից, բայց դրանք նրա պատմա-  
կական ոռմանտիկ մտորումներն են և պատկանում են Նար-Դոսի  
ստեղծագործության վաղ շրջանին, յերբ տակավին յերիտասարդ  
հեղինակն ազգեցությունների անփուսափելի տարիներն ապրելով,  
իր գրվածքների նյութը քաղում եք վոչ թե իրականությունից,  
այլ գրքերից, հյուզոյի, Դյումայի վեպերից։ Այդ մասին հետաքրքիր  
հիշատակումներ կան հեղինակի ձեռագիր ինքնակենսազրականում։  
Որինակ՝ այդ շրջանին ե իրաբերում Պօնսոն-Դյու-Շեյրալի «Ռո-  
կամբուլ» բուլվարային վեպով հափշապիլու փաստը։

«Ճշմարիս բարեկամը, «Բնույց» լարեր», — ահա Նար-  
Դոսի այդ շրջանի գործերը։ Առաջին յերկուսը լույս են տեսել  
1886 թ., յերկրորդը մի տարի ուշ, 1888 թ.։ Դրանք դրված լինե-  
լով Փրանսիական այն վեպերի ազգեցության տակ, զորոնք պատ-  
կերում են «Գեղեցիկ կոմունիների շքեղաջուր բուգուարները, մի  
կերու յերիտասարդ վիկոնտի և մարկիզունու սիրային արկած-  
ները, կոկետի հետալից կյանքը և այն, և այն, կըում են նայիվ  
ոռմանտիզմի բոլոր հատկանշող կողմերը։ Հեղինակն իր հերոսներին  
գործողության մեջ չի դնում, բացատրում ե նրանց ամեն մի քայլը,  
շտապում ե միջամտել՝ յերկուու կը լուսական գարու և  
չհասկանալ հեղինակն ընթերցողին լարելու հպատակով, հերոսներին

Գրավիլս № 8363(բ), հրատար. № 2788,  
պատվիր № 2415, տիրաժ 5000. Պետ-  
հրատի տպարան, Երևան, հանձնված ե  
արտագրության 3|XII 1933 թ., ստորա-  
գրված ե ապագրության 26|XII 1933 թ.



1-31489

տարածամ կերպով իրարից բաժանում ե և, ընդհակառակը, հանկարծակի հանդիպման փաստի առաջ ե կանգնեցնում նրանց Հետաքրքրական ե նաև այն, վոր վաղ զբջանի Նար-Դոսը, Փրանսիական ոռմանտիզմի ազդեցության տակ, առանց ընթերցողին նախապատրաստելու, պատմվածքի սկզբից նրան կանգնեցնում ե գործողությունների հանգուցված վիճակի առաջ: Կամ, ընդհակառակը, գրվածքը մկում ե բնության գեղեցիկ նկարագրով, բայց առանց անհրաժեշտ կամուրջ ձգելու բնության նկարագրի և տվյալ պատմվածքի հիմնական դաղափարի, հիմնական դործողությունների միջև «Ճշմարիտ բարեկամը», «Շնչույշ լարեց»-ը, ինչպես և այդ զբջանի մյուս վեղիկները («Բնարերար և փորդեգիր», «Արշակ Սանթուրյան»), քիչ հաջողված դործեր են՝ բնույթով սահմենտալ մելոդրամաներ, գեղարվեստական կառուցվածքի և Փարուլայի տեսակետից բռնապեսովի ու արհեստական: Նար-Դոսն առանձին կարևորություն չի տվել այդ գրվածքներին և խուսափել ե առանձին գրեկերով հրատարակելուց: Սակայն Նար-Դոսի ստեղծագործական զարգացումը ճշշտ ըմբռնելու համար այդ գրվածքները կարելու նշանակություն ունեն: Նրանք պարունակում են վօճական այն տարրերը, վորոնք հետապյուռ Նար-Դոսի ունակություն կազմեցին: Դեռևս այդ դործերում Նար-Դոսը փորձեր ե անում իր հերոսների ներաշխարհ թափանցելու, նրանց հոգիները կարգարու, և այլն:

Հետաքրքրական ե նաև յուրեւ բնուրությունը, հետո, ընդհանրապես այն հարցերը, վորոնք հուզում ելին յերիտասարդ վիպահանի հետաքրքրությունը:

Հայ մարտական բուրդուազիայի վորդեգիրած դաղափար՝ աղդայինական աղատազբական միսիան, — «տաճկահայ գատը», Նար-Դոսին չեր վոգուրում, նրան զբաղեցնում ելին շատ ավելի և մանր ու «առորյա» խնդիրներ, ինչպես որինակ՝ կանանց հարցը ընտանիքը, սկըլը, սխալ դաստիարակության տրանդակ հետեանքները, սակայն, վորոնց գեղարվեստական լուծումը վաղ զբջանի Նար-Դոսին չեածողվեց տար Վաղ զբջանի Նար-Դոսն ավելի ջուտ բարոյախոս ե, քան իրական կանքը պատկերագրող: Նրա բարոյախոսական կոնցեպցիայի հիմքը քրիտոններությունն եւ Կարծում եմ, այստեղ քիչ գեր չի խաղացել նաև Արևեն ավ. քահ. Բաղրատունին, վորն ինչպես հայտնի յե, յեղել ե նրա և Ալ. Մատուրյանի

հայոց լեղվի և կրոնի գասառուն Թիֆլիսի Միքայելյան արհետագիտական դպրոցում ե, ինչպես պարզվում է հեղինակի ինքնակնսագրականից, նրանց վրա ունեցել ե մնի ազդեցություն: «Նրա ամեն մի դասը, — պատմում է Նար-Դոսը Բաղրատունու մասին, — մի հետաքրքրական դասախոսությունն, մի հաճելի ժամանց, մի կենանից զրուցապությունն եր աշակերտների հետ՝ լեղվի, գրականության և բարոյախոսության մասին»:

Բարոյախոսական արամագրություններն ավելի շեշտված չափերով արտահայտվել են Նար-Դոսի չափածն գործերում, բանատեղծությունների մեջ: Նար-Դոսը վոտանափորների մեջ մերթ բարոյախոս ե, մարդասեր («Բարեկործին», «Մարդ»), մերթ մէստիցեզմի մեջ միիթարությունն վորոնող կրոնական («Մոնկան աղոթքքչ», «Հրեշտակը», «Ազողքը»), մելի ժողովրդի դեմոկրատական խավերն արհամարող («Ամբոխին»), մելի ել լոմոտացող սոցիալական անհավասար կյանքի դեմ («Ճակապատկեր», «Վողորմանթյուն»), յերբեմն բողոքող, յերբեմն ել՝ գերեզմանի մեջ, վորտեղ չկան վոչ քբանտ, զղթա», վոչ վիշտ, հեծեծանք, հոգս...» — խաղաղություն վորոնող («Ճապանագիր մանկան»):

Նար-Դոսի ստեղծագործության համեմատաբար ավելի հասուն զբջանի արտահայտությունն են բա պատմվածքաշարքը, վորը հայտնի յև «Մեր թաղը» խորագրով: Զուլհակ Թորոս, ներկարար Դավիթ, դուրդար Մաքուր գրուգապան Յագոր, Մարթա, Անան, Յուզան, — ահա այդ թաղի, հավիտենական աղբով ծածկված ծուռակի մուռակի փողոցներից, իրավ վրա թափած, իրարու վրա հենված տնակներից դժբախտ ընակիչները, մնի քաղաքի արվածանից ներկայացուցիչները, վոչ միայն սոսկ մարդասիրությամբ, այլ և համակրասնի չեր զգացումներով համակված: Սակայն Նար-Դոսը քայլքայլող արհեստավորությունն սկարագրին չի կարողացել սոցիալական ամբողջություն հաղորդել նրա հետաքրքրության շրջանից գուրս ե մասցես յելեսք գեպի գործարան դարձնող քայլքայլող արհեստավորությունը ձիչտ ե, կյանքում հալածվածների, անարգվածների, բախտից մերժվածների Նար-Դոսյան նկարագիրը փաստորեն մի խուլ ընդունում ե, տարերային ըմբռուցապում սոցիալական անհավասար վրանքի, խափարի ու նախապաշարումների դեմ: Սակայն խուլ բոլորի կամացի աղաքարի ու նախապաշարումների դեմ:

զոքը մանր սեղականատիրական տարերայնությանը գերի մալով վերջանում է նրանով, վոր սնանկացող արհեստավորն ու տնային գործն ապավինում են գոգելից խմբչչներին, ալկոհոլի սպասնիչ դառնության մեջ փորունելով իրենց միխթարությունը:

Նույնը նկատում ենք նաև հեղինակի վեպիրում Ռյստեղ արդեն նկարագրության տարրեան մանր բա ժուական մտավորականն է, «Պատմության կողմէց մահվան դատապարտված» մանր բուրգուական մտավորականի հոգեկան սնանկությունը:

Նաը-Դոսը վոճինել ենակ սրբանց պատկերո, վորոնք դամանալով տուերական ձեռնաբերությունների, կալվածների, հանգերի, գործարանների տերեր, մերփել են տերող հասարակական խմբակցությանը, բուրժուազիյն (Մարության, Վահան, Սանթրոսյան)։ Նա առանձին խնամքով քանդակել է մանը սեփականատիրության զրկից յելած մտավորականության ներկայացուցիչներին. նա մի կողմից ցույց է տալիս բարոյական անկման տիտոր փաստի տուաջ կանգնած մտավորականնեն (Թոռոյան), անկազար հաստիքական գործչի գիծակի տակ կը բարոյական այլանդակությունը թաշցնող՝ բազմաթիվ ափյօրաների հեղինակին (Բաղենյան) անհավասարակօրին մտավորականնեն, վորը «իրականության մեջ կույսի պիս ամոթիսած լինելով, յերկակայության մեջ համարձակ է ցինիկի և երուարկի պիս, վորը հոսի փելքսովայությանը գերի մնալով, առում և քբանություն, բռնություն և բռնություն — ահա թի ինչով և լոջապատճեմ մարդը կյանքի մեջ», վորը վերջինիքու, հանդում և կյանքը բացասիլուն, մարդկության յերեսին նետելով «համաշխարհային կրկեսի միմոս» անսունը (Շահնյան):

Անանա Սարոյան»-ի մեջ նար-Քոսը պատկերացրել և բուր-ժուական — քաղեկենիսկական ընտանիքի կործանումը «Փոչինչ չկա, փոչ մել հիմնափոր բան, փորից կարողանայի ամռոք կոպէն՝ չանհե-ապնալու համար»—զգում և Աննան, դրվագքի հերոսուհին, Հոփիսի-մեյին ուղղված նամակաշարքում, վորով նա իրենց ընտանիքի գող-բերդական պատմությունն և անումն<sup>\*)</sup>.

\*) ესინ უარიყმანული იქნებელ ხ ძელ განს ჩ ნრათარაპი მუკინი—  
აռაღებუ ანდაძ მომატებულ ხ უ. უაფანტოვეამნე ინირ-ზარეთი,  
1888 წელს, ხას ჩაგირდ თავრებუ 1888 წელს ლოკი ხ ენდავებულ  
აუანძრენ დროის 1908 წელს ლოკი ხ თხის ეხერებულ ნრათარაპი—  
მუკინ ხ ქედგაში მახლ ხ ნეირნაპი ქსნერაპი ნრათარაპი—

«Նպատակս յենել ե ցույց տալ նյութականի վրա հիմնված մի ընտանիքի կործանումը, — գորում ե նար-Դոսս Շարոյանին և մասին ը նամակներից մեկում և այդ ընտանիքում մեծացած աղջկա տրագեդիան այն դեպքում, յերբ այդ ընտանիքի միակ հետապնդությունը՝ սակայն քանզի կործանում ե բուրժուական դաստիարականը՝ սակայն չի տվի իրական գենք կյանքի ձախորդությունների դիմ կավելու և հենց փոք այդ ձախորդությունները գաղաքական պատճեն են առաջանալու համար»:

Աննային վրձակված ե կյանքի բարձրութենքներից իջնել մինչև  
նրա հատկը, թողնել իրեն աղջապատող դայակներին, աղախիննե-  
րին, նորաձև գլխարկները, ըստագեստները մեջ խոսքով կյանքի  
լիությունն ու փափկակեցությունը և հասկանալ թե ինչ ե իրենից  
ներկայացնում այն հնազար գլխանի հրեզը, վոր կոչվում ե ճայ-  
ռահեղ թշվառություն, ծայրահեղ աղջապատություն, սև չոր հաց—  
ե այն ել վոչ միշտ, մութ սենյակ, անփերջ աշխատանք, մերկու-  
թյուն, ցուրտ, հիփանդրություն, անփերջ զրկանքներ, վրատ, տառա-  
թինք, լաց, վողբ, հալածանք, արհամարհանք, սառն կարեկցություն,  
վիրափրանք, ամոթ, անպատվություն, անզոր բարկություն, ան-,  
վիրափրանք, ամոթ, անպատվություն, անզոր բարկություն, ան-  
պատվանություն, տառչանք, անփերջ տառջանք... «Եյդ ժանր կա-  
ցությունը, անցումը՝ մի ծայրահեղությունից դեպի մյուսը մնա-  
կանարա Աննայի համար պետք ե ստեղծելին հոգեկան անիմանալիք  
տվայտանքներ, բարդ հոգեվիճակ, աննկարագրելի դալարութերով։  
Այդ ամենը նար-Դոոս նկարագծել ե վարպետությամբ, Գնահատե-  
լին այն ե, վոր նա Աննայի խռովահույզ հոգու նկարագիրը շաղ-  
կապել ե իրականության հետ, նա Աննայի վողբերդական կյանքի  
պատմությունը դժել ե Սարոյանսերի ըստանելիան գդբախտ իրա-  
պարձությունների (նոր անդամալուրծ դառնալը և ինեւագարփելը,  
դարձությունների (նոր անդամալուրծ դառնալը և ինեւագարփելը,  
Գրիգորի մահը, Արքակի հարբեցողությունը և այլն) Փոնի վրա Այդ  
հոգեբանական ճշգրտություն և հաղորդել Աննայի կերպարանքներն,  
միանգամայն համոզիլ գարձնելով նրա ծայրահեղ հուսալքությունը,

թյամբ լւոյս տեսնող «Յերկերի լիակատար ժողովածու»-ի առաջին  
հատորի մեջ: «Ասսա Սարցյանը» լույս և տեսնել նաև ոռուերես  
Գ. Լուսյանի թարգմանությամբ, 1901 թվին «ՀԱՅՐ. Վետուն»  
ժողովածու (ԱՆ 10-11). 1902 թվին հրատարակել և առաջին  
արքով:

վորը տանում և նրան մինչև անձնասպանությունն Աննան հույզերի մի ամբողջ ուլուն եւ, մեկը մյուսին հաջորդող, հակասող մտքերը, կյանքի գառն ճշմարտությունները այնունում են նրա հոգեկան անդորրը, մեր հերոսուհուն նետելով տարամերժ ցանկությունների ծովը: Աննան գիտակցում եր գոյի ավելորդությունը, բայց, միւնույն ժամանակ, իպարատությունը թույլ չի տալիս, վոր իրեն կտրելկցն, խղճան: Նրա հիվանդագին ինքնասիրությունը չի հանդուրում մեկ ուրեմի կարեկցական խոսքը, բայց ինքը խիստ եւ ու գաժան իր անձի վերաբերմամբ: Առանձնանալ և անընթել — ահա, Աննայի տենչանքը Շնատ անդամ այսպիս խորասուզվում իմ ժամանակներին մեջ, վոր ամեն բան կատարելավիս մոռանում եմ — զրում ե Աննան Հովհանիմեյին: Ճիշտ ենկատաված, թե Աննան Շահյանի կրկնակն ե — նրա կանացի արտահայտությունը:

Շնատ վատ խաղ ե խաղացել ինձ հետ ճակատագիրը, հանկարծակի և անպատրաստ նա զպրաել ե ինձ այդ դասն, այդ սոսկալի իրականության առաջ և առում և՝ Շնատատուն մնայ, գրում ե, Աննան ընկերուհուն: Շնու դիմ առ զեմ կանգնած եմ դասն իրականության առաջ, վորի մասին կյանքիս մեջ յերեք գաղափար չեմ ունեցել — դանդաւալում ե Աննան մի ուրիշ նամակում: Փոխեցեք դաստիարակության սիստեմը և այդպիսի ախուր փաստերի առաջ չեք կանգնի — կարծում ե Նար-Դոսը: Եաթի, նկատենք, վոր յերեւութը շատ ավելի խորն ե, քան կարծում ե նաև Աննայի և ընդհանրապիս Սարոյանների անկումը պայմանափառված ե ճասարակական այն տեղաշարժերով, վորոնք տեղի ունեցին 80-ական, 90-ական թվականներին Անդրկովկասի սոցիալ-անտեսական կյանքում: Իսկ ինչ վերաբերում ե դաստիարակությունը, ապա պետք ե ասել, վոր Նար-Դոսը չի կարողացել ճասկանալ վոր չի կարելի ժխտել բուրժուական մորալը, զաստիարակության բուրժուական սխստեմ՝ առանց կործանելու նախ և առաջ կապիտալիստական կարգերը, վորոնք հարազատ ծնունդն են նրանք: Նար-Դոսի աշխարհայացքը հասկանալու համար «Աննա Սարոյան»-ը կարեր ե նաև այն տեսակետից, վոր նաև ցույց ե տալիս հեղինակի յերկությունը, հակասական վերաբերմունքը դեպի մուտքավոր գաղափարի մեջ, մյուս կողմէց՝ Փատուլիզմին դեպի մուտքավոր գառն ճակատագիրի դասն իրերին ե վերտրում:

«Աննա Սարոյանը» Նար-Դոսի առաջին սետիստական գործը լինելով, արտահայտում ե հեղինակի անցումը նայելի սոմանտիգ-մի գիրքերից գեղի իրականության, համեմատաբար ճշտապատում հաղորդման վոճը՝ ուեալիզմը: Յերկը հիմնականում ուեալիստական սկզբունքներով կառուցված լինելով, անխուսափելուրեն կըլու յեր ատակավին չհաղթահարված սոմանտիզմի ազդեցությունը: Որինակ Աննայի հիվանդ յեղբոր, Գրիգորի ծայրահեղ միստիկականությունը, և ընդհանրապիս այն բարոյախոսական գատողությունները, վոր անում ե Աննան իր նամակներում:

Նար-Դոսի մասին քննադատանիւն ասել են, վոր նա այն ուեալիստ վիպողներից ե, վոր վերաբարդերով «կյանքը՝ ինչպես վոր կա», լիակատար աննկատության մեջ են պահում իրենց վերաբերմունքը գեղի նկարագրով յերեւութը: «Աննա Սարոյանը» ընդհակառակն ե համոզում: Զայած վերջինս շարադրված ե տանց հեղինակի միջամտությունների, նամակներով, բայց հեղինակի շուռչը, վերաբերմունքը լիրիկական ջեղումների կարգով սփռված են Աննայի բոլոր նամակներում: Այդ ցույց ե տալիս, վոր հեղինակն անտարբեկ չեք գեղի նկարագրով անցուդարձը, վոր ընդհակառակը, կարեկից եւ հոգատար գեղի իր հերսոսուհին, «Յերբ վերջացրել՝ արցունքներս չեյի կարողանում զավել» — պատմել ե Նար-Դոսը յերշտասարդ գրչակցին: «Աննա Սարոյանի» մասին: Ակամայից հիշում իս Տուրգենևին, Ֆլորենին թեթեւ տիկին Բովարիի մահը ցնցել ե Ֆլորենին ու նրա աշքերից արցունքներ պոկել («Տիկին Բովարի»), յեթե Տուրգենևի Բազարովի մահը նկարագրելիս ստիպված ե եղել զլուխը հետ պահել: Վոր արցունքները չթափվեն ձեռագրի վրա («Հայրեր և զավակներ»), ապա թունափորված Աննայի անջունչ դիմուլը ինչպես նար-Դոսն ե պատմում, յերկար ժամանակ չի հետացել նրա աշքերից: Այս փասթը ցույց ե տալիս, վոր Աննայի գեղմբ քանդակված ե այն վիպագրի ձեռքով, վորի կենսահայեցողության հասարակական պարունակությունը կազմում ե կապիտալիզմի հարվածների տակ ճմլող բուքմուայի հոգեգիտական արխարեն:

Խոյեմբ. 1933 թ. Յերևան

Ուուրեն Զարյան  
պատիկ ուժով սիրում իմ այն սաքուր սրբալու ԿՌ

# ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

1888

Ա.

Թիֆլիս, 6 սեպտեմբերի 1880

Իմ սիրելի՝ Հոկտոբերին, իմ անգին քույրիկ,  
Անսպասելի նամակդ ինձ շատ տիրեցրեց և միւ-  
նույն ժամանակ շատ բարկացրեց: Միթե կարծում ես,  
վոր յես յերբերցե կարող կլինեմ — մինչեւ անգամ յե-  
թե ալդ կարենամ ել — մոռանալ նրան, վոր մանկու-  
թյանս ժամանակից ի վեր իմ ամենասիրելի, իմ ամե-  
նասրտակից ընկերունին ե յեղել վորին ամեն ժամանակ  
և ամեն դեպքում համարձակ հայտնել եմ սրտիս բոլոր  
զաղտնիքները և վոր կիսել ե տիրությունս, կրկնա-  
պատկել ե ուրախությունս: «Դու ինձ մոռացար, Աննա,  
դու ինձ մոռացար», գառնությումը բացականչում ես  
նամակիդ մեջ, Զիմ հասկանում, թե ալդ ինչ կասկած  
ե (թեե հավաա կարող ելի անվանել այն զգացմունքը,  
վորով զըել ես այդ բառերը), վոր ծնել ե քո մեջ մեր  
անջատումն ու լեռկարատն լրությունը: Գուցե այդ  
ընկերական անհուն, կուըր սիրո հանկարծ բոնկվող  
անմեղ բարկության արգասիք ե: Ցեթե ալդպես ե (վոր  
ամենահավանականն եմ գտնում), ապա յես կրկնա-  
պատիկ ուժով սիրում եմ այն մաքուր սիրտը, վոր

մից՝ Փատալի զմին գերի մալով, ամեն ինչ ճակատադրի դառն խա-  
ղերին ե վեբարբում:

տրամադրիք և ալդպիսի արդար բարկությունների: Ի հարկե, անպատճառ չպիտի լերդվեմ, սիրելիք քույրիկս, հավատացնելու համար, վոր չնայելով ալսքան ժամանակ քեզ նամակ չելի գրում, բայց ամեն որ և միշտ հիշում ելի քեզ. իսկ լերեմն — և այն շատ հաճախ — մի այնպիսի անհուն կարոտություն եյի զգում դեպի քեզ, այնպես ցանկանում ելի քո ներկայությունը, վոր... մի՞թե բառեր կան այդ զգացումներն արտահայտելու: «Բայց ինչու նամակ չելի գրում», անպատճառ, կիարցնս ինձ:

— Ինչու նամակ չելի գրում քեզ, -- հարցնում եմ և ինքս ինձ: Պատասխանի համար պետք ե դիմել այն անհասկանա ի զորությանը, վոր՝ մարդկալին կամքին հակառակ՝ միայն ինքն և զգացմունքների ղեկավարը: Մարդկալին սիրտը լերեմն այնպես լցվում ե (սակայն այդ շատ քչերին և պատահում, իսկ ինձ՝ շատ հաճախ՝ մանավանդ վերջին ժամանակներս), նորանոր զանազան զգացմունքները՝ միմյանց խառնվելով՝ այնպիսի ուժով գործում են նրա մեջ, վոր նրանց կարելի չել լինում արտահայտել վհջ բառերով և վհջ մինչև անգամ գրչովէ Զորեղ զգացմունքներից ալեկոծվող սիրտն ել ունի իր կապրիզները, ինչպիս ովկիանոսն անեղ փոթորկի ժամանակ: Առանց զուրս գալու սրտի պատերից, այդ զգացմունքները, ինչպես լավան լերկրի ներսը, բորբոքվում են, լեռում այնքան, մինչև վոր իրենք իրենց դարձլալ հանգստանում են, խաղաղվում: Սակայն վորքն քաղցր ու թեթե, բայց և մեւնուկն ժամանակ վորքան դառն ու ծանր և զգացմունքների այդ ալեկոծությունը սրտի մեջ: Ուզում ես աղոթել և անփծել, ուզում ես աղոթել և մեռնել:

Յերանի, բայց վաչ նրան,

ում սրտին հատուկ են ալդպիսի ալեկոծություններ... Յեվ մի գիտե, մինչև լերը յես այդպիս շարունակելի պահպանել գեպի քեզ ունեցած լուսությունս, սիրելի քույրիկ, լեթենամակդ հանկարծ չբանար սրտիս դռները քո առաջ... Բայց այստեղ գրիչս այլևս առաջ չի գնում... Տարակուառ եմ... Ի՞նչպես արտահայտեմ այն, ինչ վոր այժմ զգում եմ... Ամբողջ քառորդ ժամ անցավ. գրիչը ձեռքիս կանգ և առնում. գլուխս խոնարհվել և թղթի ձեռքիս կանգ և առնում. գլուխս խոնարհվել և թղթի ձեռքիս սաստիկ բաբախում ե... Հազարավոր զգացրա. սիրտս սաստիկ բաբախում ե... Հազարավոր զգացրա. Վահանակ կառողանում: Մնաս բարչավ, անգին քույրիկ, Մյուս անդամ:

Բուռն կարոտով սեղմում եմ քեզ կրծքիս և համբուրում:

Քո Աննա Սարոյան,

## Բ

Թիֆլիս, 20 սեպտեմբերի 1880

Սիրելի Հոխիսիմե,

Դու զարմանում ես, թե ինչպիսի լեղանակով եյի գրել նամակս. «Կարծես մելամաղձություն և լեկել գրել» գրում ես դու: Իրավունք ունիս զարմանալու վրադ», գրում ես դու: Իրավունք ունիս զարմանալու վրադ» և այդպիս կարծելու, քանի վոր այդ յեղանակով գրած և անամակ ինձնից գեռ լերբեք չես ստացել: «Ի՞նչ և պատահել քեզ», հարցնում ես: — Վոչինչ, բոլորովին վոտահել քեզ», բայց և մեւնուկն ժամանակ վորքան դառն ու ծանր և զգացմունքների այդ ալեկոծությունը սրտի մեջ: Ուզում ես աղոթել և անփծել, մեջ, ծնողներս, յեղբային վողջ և առողջ եմ:

և մենք առաջվա նման հաշտ ու սիրով ենք ապրում: Հստ յերկութին պետք ե վոր յերջանիկ լինեմ, տրտնջալու վոչինչ տեղիք չպիտի ունենամ, այսպես չեմ, սիրելի քուրիկ: Բայց արի տես, վոր այդ այդպես չե: — ընդհակառակն, այս վերջին ժամանակներս յես ինձ թշվառ եմ զգում՝ առանց մի վորեկցի ակնհայտ պատճառի: Ել չես տեսնի ինձ առաջվա նման ամեն մի չնչին բանի վրա ուրախ քրքջալիս կամ չարաճճություններ անելիս, վորոնց համար դու ինձ միշտ նախատում եյիր և խրատում, վոր յես գոնե փոքր ինչ լրջամիտ կենամ: Ել չես տեսնի ինձ առաջվա նման ցանցառամիտ յերիտասարդների հետ ընկած, վորի համար քո նախատինքն ավելի սաստիկ եր լինում և յերբ չեյի լսում քեզ, ուղղակի խոռվում եյիր ինձնից, մինչև անգամ յերկար ժամանակով: (Բայց յեթե այժմ տեսնես՝ թե վորքան յես ատում եմ այդպիսի յերիտասարդներին և վորքան զզվում եմ նրանցից... Գուցե այժմ յես նախատես քեզ և խոռվեմ քեզանից, յեթե ինձ չլսես): Առաջվա անմիտ յերեխայական արարքներից ել վոչ մի նշույլ չես տեսնի իմ մեջ. կարծես յերիտասարդության վաղուց արդեն հրաժեշտ եմ տվել սիրտս կարծես մի անգամից ծածկվել եւ ել հնար չկարանալու: Այս, ինչ վոր առաջ հոգով չափ սիրում եիր, այժմ սաստիկ ատում եմ. կլուբ բոլորովին չեմ գնում, պարահանդեսներ - համարյա յերբեք, իսկ թատրոն — շատ քիչ անգամ: Ամեն տեղ և ամեն բանից շատ շուտ նություն և շատ եմ ջղախանում, յերբ ինձ անհանգիւտացնում են: Առանձնության ժամանակ մտածմունքներն ակամա պաշարում են ինձ: Շատ անգամ այնպիս

խորասուղվում եմ մտածմունքների մեջ, վոր ամեն բան կատարելապես մոռանում եմ: Բայց թե ինչ եմ մտածում, — այդ յես ինքս ել չգիտեմ: Միայն այս գիտեմ, վոր, ինչ վոր մտածում եմ, բոլորը դառն ել լինում: Յերբեմն մտածմունքներիս անձնատուր լինելուց հետո՝ յերբ սթափվում եմ, զգում եմ, վոր աչքերս լցվել են արտասուրով և քիչ ե մնում հեկեկամ: Լինում ե և ժամանակի, վոր սաստիկ ծուլանում եմ, — թեե, ինչպես գիտես, բացի կարդալուց և դաշնամուր նվազելուց, յես ուրիշ վոչ մի զբաղմունք չունիմ, և այնքան ծուլանում եմ, վոր առավատները վոչ ուզում եմ անկողանց վեր կենալ և վոչ տնից դուրս դնալ ուզում եմ նիցս վեր կենալ և վոչ տնից դուրս դնալ ուզում եմ միշտ մնալ այնպես, ինչպես կամ: Բայց յերբեմն ել այնպիսի մի անզուսպ շարժունության պետք եմ զգում, վոր միանգամից ուզում եմ և այս անել, և այն, և վաղել վաղվել, և պարել անգաղար պարել դաշնամուր ածել, կոտրել, վիթել, ծեծել, մի խոսքով՝ անել ամենը, ինչ վոր կամենում եմ, և ինչ վոր ձեռքիցս այն ամենը, յերեկով ձիշտ այդ գրության մեջ եիր. յերեկով: Հենց յերեկ ձիշտ այդ գրության մեջ եիր. յերեկովան թեյը խմելուց հետո՝ բաժակն այնպես շարտեցի կոյան թեյը խմելուց հետո՝ բաժակն այնպես պարագաների վրա, վոր գլորվեց, ընկապ հատակի վրա և սեղանի վրա, վոր գլորվեց, ընկապ հատակի վրա և վերցրի գիրքը կարդալու, բայց մի քանի տող փշրվեց, Վերցրի գիրքը կարդալու, բայց մի քանի տող կարդացած՝ իսկույն ծածկեցի և շպրտեցի հահազիվ կարդացած՝ իսկույն ծածկեցի և շպրտեցի հատակի վրա: Նստեցի դաշնամուրիս առաջ և այնպես տակի կերպով իսկեցի մի քանի ակկորդներ, վոր կատաղի կերպով իսկեցի մի քանի ակկորդներ, վոր կատաղի կերպով իսկեցի մեկի զսպանակը կոտրվեց, Ել չեմ հիշում, թե ինչեր արեցի: Մեր տանը բոլորը զարմացած մնացել: Յես ել պակաս չեմ զարմացել, հավատացիր: Խոչչու յեմ այսպես անում, ինչո՞ւ խելագարվում եիր, Խոչչու յեմ այսպես անում, ինչո՞ւ խելագարվում ե, եմ, ինչ ե, թե այս ել մի տեսակ հիվանդություն ե,

Վոր ակամա՞գալիս և մարդու վրա. — Վոչինչ չեմ հասկանում: Բայց մի բան յես շատ լավ հասկանում եմ ու զգում. — սիրոս ձգտում ե, ուժգին թափով ձգտում ինչ-վոր մի անհայտ, կարծես յերբեք գրություն չունեցող բանի, ձգտում ե և, կարծես, հույս չունի, թե յերբեկցի կասնի: Յես այժմ ամեն կերպ աշխատում եմ այդ հիմար դրությունից դուրս գալու և հույս ունիմ, վոր զանազան զգացմունքներով ինձ այդ կհաջողվի: Սկսել եմ շատ կարդալ և համարյա ամբողջ որն ընթերցանությամբ եմ անցկացնում:

Սիրելիս, նամակ շուտ-շուտ գրիր, յես ել շուտ-շուտ կրեմ. ի նկատի ունեցիր, վոր սիրոս արդեն բաց և յեղել քո առջև և յես այլևս չեմ կարող ծածկել քեզնից իմ զգացումները: Ուզում եմ նամակներով քեզ հետ ամեն ինչ բաժանել. զգում եմ, վոր այդ ինձ թեթևություն կպատճառի: Առայժմ, սիրելիս, յնոր գրություն,

Քո Աննա Սարոյան.

Գ

Թիֆլիս. 4 հոկտեմբերի 1880

Սիրելի Հոփիփոխմե,

Դու աշխատում ես բացատրել հոգեկան ոտարոտի դրությունս և գանում ես, վոր այդ պարապությունից, անգործ լինելուցս ե: Գուցե մասսամբ ճիշտ և այդ, բայց այս ել կա, վոր յես դեպի վոչ մի դործ ձգտում չեմ զգում: Յեվ ինչ գործ կհրամայեիր, վոր կատարելի, ինչ անելի, ինչ զգաղվելի, քանի վոր մի հասարակ գործվածք անգամ մինչեւ վերջը համբերություն չունիմ տանելու և ամեն բան, ինչ ձեռքս եմ առնում, ձգում

եմ կիսատ... Վոչ, յես կարծում եմ, վոր գլխավոր պատճառը մենակությունս ե: Գուցե զարմանաս, բայց այդ այդպիս ե. յես մենակ եմ այժմ, և այդ վոչ թե այն պատճառով, վոր առաջվա նման այլևս ընկերուհիներ չունիմ, վորոնց հետ կարողանամ անցնել ժամանակս՝ տաղակությունիցս խուսափելու համար — վոչ, այլ այն պատճառով, վոր յես ինքս եմ հեռացել նրանցից, վորվհետև նրանք բոլորն ինձ այժմ շատ հիմար և դատարկ արարածներ են յերեսում... Այս, ուրիշ բան կլիներ, յեթե դու լինելիք մոտս. այն ժամանակ յերեք չեցի ձանձրանալ յերեք տաղտկություն չելի զգա, ինչպես առաջ, յերբ դու այստեղ ելիր, թեև այն ժամանակ քո չափից դուրս լուրջ դատողություններն ու խրատները յերենն շարժում ելին ծիծաղս... Այս, վորքան թեթևամիտ ելի այն ժամանակ... Յեվ այժմ զարմանում եմ, ճշմարիտ, թե ինչպես քո առողջ խելքով, քո լրջությամբ կարողանում ելիր ինձ, թեթևսովիկիս հետ վորեւ հպարերություն ունենալ, թեև չքավորությանդ հետ ունելիք և սաստիկ ինքնասիրություն, վորպեսզի իսկուն և յեթ հեռանայիր ինձնից, յերբ տեսնելիք, վոր քո դեպի ինձ ունեցած սերտ բարեկամության մեջ զանազան նախանձախնդիրներ լոկ ստոր հաշիվներ են տեսնում քո կողմից: Ի՞նչ պես չելիք ձանձրանում իմ ամենահիմար խոսակցությունից, վոր միշտ այն մասին եր լինում, թե գիշերու պարահանդեսում հեմ հետ պարեցի, ում հետ ծանրաթացաց, ով ինչպիսի նոր հագուստ ուներ, թե թատրոնում ինչ զգերա ելին ներկայացնում, ով ինչպիսի յերդում, ով կար ախտել աչքի ընկնող, թե ինչ նոր մագալիկ յինիւ, ինչ նոր հագուստ պիտի կարել տայի ինձ հոգաբար, ինչ այս ինչ ոքը վոր-

տեղ եմ հրավիրմած... — Անշուշտ դրա համար լիս պարտական եմ քո զիջող, սիրող բնավորությանը և խղճահարությանը, վորով կամենում ելիք ինձ գոնե փոքր ինչ խելքի բերել...

Այս, անգին քուլիկս, վորքան սիրում եմ քեզ: Վորքան շատ եմ մտածում մեր բարեկամության մասին, այնքան սիրու ավելի ու ավելի յե կապվում քեզ հետ, վորովհետև գնահատությունդ նոր եմ հասկանում: Ուզում եմ, վոր այդ անցյալը գոնե մի բոպե վերադառնա, և յես առատարուղի ջերմ զգացմունքներով հատուցանեմ քեզ քո դեպի ինձ տածած անկեղծ բարեկամության փոխարենը: Չես կարող լերևակալաւել, թե վորքան կարուում եմ քեզ ալժմ: Յեվ ի՞նչպես չկարոտեմ, քանի վոր ամբողջ լերկու տարի յե անցել այն որից, լերբ դու վերջին անգամ լեկար մեր տուն՝ հրաժեշտիդ վողջունը տալու մեղ: Այդ որը հիշում եմ, ինչպես լերեկը: Ի՞նչ սքանչելի որ եր այդ: — Շաբաթ լերեկո եր: Տան բոլոր դուներն ու լուսամուտները բաց ելին դեպի պատշգամբ: Մայիսյան թարմ, զովարար ողը, վոր լիս միշտ համեմատել եմ քնած քնքշիկ մանկան անլսելի շնչառության հետ, ամենայն առատությամբ ներս եր մտնում սենյակները: Արեկի ճառագալթները բեկվելով լուսամուտների ապակիների մեջ, անդրադառնում ելին հանդեպ պատերի վրա աղոտ և անջերմ լուսով: Պատշգամբում չարաձնի ծտերն իրենց ուրախ ծլվլոցով ահագին աղմուկ ելին հանում: Նրանց ծլվլոցի ձայնը պարզ ոդում որձագանք եր տալիս: Վորքան սիրելի և գարունը, յերբ լերգում են թոշունները: Ի՞նչ կլիներ, գարունը յեթե թոշյուններ չլինելին. — Նա անշուշտ կորցներ իր հրապույրի կեսը, ինչպես ուրախ,

հանդիսավոր տոնախմբությունն՝ առանց լերգի ու նվագի: Յես նստած ելի դահլիճում դաշնամուրիս առաջ և նվագում ելի Շումանի սերենադը (շատ լավ հիշում եմ, վոր հենց այդ ելի նվագում), հարևան սենյակում պարապում ելին լեղբայրներս. մեծը — Արշակը նստած եր սեղանի վերջին լուսամուտի մոտ՝ իր գրասեղանի առաջ և կանցելարխայից բերած մի ահազին կուտ ինչ վոր թղթեր եր քրքրում, սենյակի մյուս վերջին լուսամուտի մոտ՝ իր գրասեղանի առաջ նստած եր մուկս լեղբայրս, Գրիգորը և կարդում եր «Դոն Կարլոսը» (այդ հիշում եմ նրանից, վոր նա ներս մտավ և, խնդրելով վոր լսեմ, կարդաց ինձ մոտ մի գեղեցիկ կտոր Մարկիզ Պողամի մի մենախոսությունից, վորից հիացել եր: Նա առհասարակ չափից դուրս սիրում ե Շիլլերը. խո զիտես, վոր նա թունդ ոսմանտիկ ե): Խոկ փոքր յեղբայրս՝ — Գարեգինը նստած եր մեջ տեղի լուսամուտներից մեկի առաջ և սովորում եր դասու: Հարևան սենյակում հայրս և մայրս «Նարզի» ելին խաղում. այդ նրանց սիրելի զբաղմունքն եր, և ե, լերեկոներին: Ա՛խ, ինչքան ուրախ, ինչքան յերջանիկ ելի յես այդ ժամանակ: Ինչպիսի անհուն սեր ելի զգում յես դեպի մեր այդ խաղաղ, սիրող, հաշտ ընտանիքը: Սրտիս մեջ դրախտ եր բացված և այդ դրախտը յես ուզում ելի արտահայտել Շումանի սքանչելի սերենադի մեջ...

Հանկարծ հարևան սենյակում լսեցի քո ձայնը:

— Յեկել եմ ձեզ մնաք բարե ասելու. վաղն առավոտյան գնում եմ, — ասում ելիք ծնողներիս:

Թողի դաշնամուրը, վեր թռա և վաղեցի քեզ մոտ:

— Սիրելիս, միթե իրավ, վաղն առավոտյան, — բացականչեցի՝ բոնելով ձեռքերիցդ:

— Ալու:

«Այսու... Անգույթ, ինչ ելի արել քեզ, վոր լիրջանկութևանս բարձրությունից ինձ այնպես հանկարծ ցած գուրեցիր:

— Միրելս, Հոփիսիկս, յետաձդիք — փարեցի վզովդ:

— Վհչ, կարծես լերդիկ ես գու:

— Միրելս, մաս մի քանի որ ել:

— Անկարող եմ:

Միթե սիրան այնքան կարող ե քարանալ: Դու մաք բարեկ ես ասում ծնողներիս, մասք բարեկ ես ասում յեղբարներիս, սեղմում ես ամենքի ձեռքն ել: Յես շտապով ծածկում եմ վիեղուցը, դուրս եմ գալիս քեզ հետ: Գնում ենք: Ու՞ր: Ո՞վ գիտե: Յերկուսս ել խոսում ենք, ստկալն ավելի լուսմ ենք, քան թե խոսում: Ինչու: Զգիտեմ: Եկ զգում ելինք, վոր շատ բան ունեյինք ասելու, բայց շատ քիչ բան ելինք կարողանում ասել: Ինչ հիմար դրություն եր:

Հետելալ որն յես քեզ հրաժեշտ ավելի յերկաթուղու կայաբանում, Վերջին ջերմ համբուլըները դրոշմեցինք միմյանց ըրթունքներին: Ինչպես ելինք լալիս... Սքանչելի արցունք... Շոգեկառքը սուլեց և սկսեց դեռ կամաց, հետո քիչ-քիչ արագ փախցնել քեզ: Վերջին անգամ լուսամուտից շարժեցիր թաշելինակդ, յես — իմը, և այլս չտեսաք քեզ:

«Բայց ինչու յես գրում ինձ արդեն հայտնի այդ յեղելությունը, ինչու այդ բոլորը հիշեցնում ես ինձ»՝ զուցե հարցնես դու, յեթե միայն այլևս նույնը չես, ինչպես յես քեզ ճանաչում ելի այս ժամանակ, վորովհետեւ դու, նույնը լինես, ապա այդ հիշողությունը քեզ համար նույնքան սիրելի պիտի լինի, վորքան և

ինձ համար այժմ, չնայելով, վոր այն ժամանակից անցել ե ամբողջ լերկու տարի: Կարծեմ Գյոթեն ե տառմ — պետք չե քըքըել անցյալը. նա միշտ դառն ե լինում ներկայի համար: — Ճիշտ ե արդյոք այդ: Զգում եմ, վոր՝ այս, և զգում եմ, վոր՝ վոչ: Ինչու: Բացատրել չեմ կարող, բայց յես արդպիս եմ զգում: Անցյալի հիշողությունը վորքան դառն, նույնքան և քաղցր ե, և այդ պատճառով սիրելի ե, վորպիս անունը սրտիդ մոտ ալն ենակի, վորին տարիներ առաջ հողին ես հանձնել: Այդ հիշողության մեջ կամ մի տեսակուրուն, յեթե կարելի յե այդպիս ասել, հոգեկան պոեզիա, ինչպիս յերկու հակառից զգացումների զուգորդության մեջ: Մի ծիծաղիր փիլիսոփայության վրա:

Կարծեմ այս անգամ ալսքանը բավական ե, մյուս անգամ մեր ընտանիքից տեղեկություն կտամ քեզ, վոր խնդրում ես ինձնից: Իսկ այժմ ընդունիր համբուլը և մնաս բարե:

Քո Աննա Սաբորան.

Դ

Թիֆլիս, 11 հոկտեմբերի 1880

Միրելի Հոփիսիմե,

Նախորդ նամակովս խոստացել եյի քեզ տեղեկություն տալ մեր ընտանիքից և անա կատարում եմ խոսուում:

Նախ պետք ե ասեմ, վոր Գյոթորը հիվանդ ե, հազում ե: Այս հինգերորդ օրն ե, վոր գիմնազիոն չի գնում: բժիշկները խորհուրդ են տալիս առժամանակ ձեռք վերցնելու պարագաներից: Յես սաստիկ յերկուդ եմ կրում, վոր նրա հիվանդությունը թոքախտ լինի,

մանավանդ, վոր նա կազմակծքով շատ թուլ և և նի-  
հար: Դու գիտես, թե վորքան եմ սիրում լ դբայնե-  
րիս, առավելապես Գրիգորին: Վոր այս վերջին ժամա-  
նակներս մանավանդ ինձ համար՝ թե լեզրայր և բառիս  
ըուն նշանակությամբ և թե աւենամտելի իմ խորհրդակից:

Յա սարսափում եմ, վոր լսում եմ նրա խուզ հաղի ձայնը, մանավանդ գիշերները, յերբ քնած և լինում։ Նա շատ ե պարապում, չափից դուրս պարապում ե. այդ վատ և աղդում նրա հիվանդութեանը։

Բայց Գրիգորի հիվանդությունից զատ մի ուրիշ  
հանգամանք ել կա, վոր պակաս մտահոգություն չի  
պատճառում մեղ: Դուք գիտես, թե հայր ինչպիսի զվար-  
ճասեր և կատակասեր մարդ ե, բայց վերջին ժամա-  
նակներու մեծ փոխոփոխություն են կատվում նրա մեջ,  
որինակ՝ յերեկոները վերադառնում ե տուն միշտ մի  
տեսակ ախուր ու մտախոն և գլխարկն աչքերի վրա  
վայր թողած, այն ինչ առաջ նա գլխարկը միշտ յետ  
գցած եր ունենում ճակատի վրա և միշտ մըմնջում եր  
մի վորեկցից ուրախ յերգ: Խոսելիս ել ամենքն հետ  
բարկացած ե խոսում, կարծես ամենքն ել նրան վո-  
րեկցե անախորժություն են պատճառել կարծես ա-  
մենքն ել նրա առաջ մեղավոր են: Մի անգամ հարցը ի  
պատճառը: Խոժոռած դեմքով նախ լուռ նայեց ուղղա-  
կի աչքերիս, հետո հանկարծ մի վարկան ժողաց,  
աչքերը վայր թողեց, ներքին շուրթերը կախեց և դեմ-  
քին տվեց մի այնպիսի ճիշտ և միենալի ժամանակ  
ծիծաղելի արտահայտություն, վորպիսին ունենում ե  
յերեխան այն ժամանուկ, յերբ նրան բոլորովին իզուր  
մեղադրում են չարություն անելու համար:

—Յես ի՞նչ մեղավոր եմ, որիորդ, —աբտապանեց նա

բարակ, իբր թե լեռելսայական ձախով.—Կիրակոսանը  
չարություն ե անում, զուք լինձ եք մեղադրում։ Ուշ-  
դում եք Մարտիրոսանին հարցըք։

Զկարողացած ծիծաղս զսպել և դրկեցի նըան:

— Հալրիկ, միթև տխուրք ժամանակղ ել կարողանում  
ես կատակներ անել — բացականչեցի ուրախացած:

— Աւզում եք Մարտիրոսյանին հարցընեք, — կրկնեց  
Կուն բարակ ձայնով:

Դարձաւ ծիծաղեցի և ավելի ամուր գրկեցի սրան:

Նա կամաց աղտոտվեց գրկիցս, ժպատց՝ նայելով  
աշքերիս և քնքղորեն հանըուրեկելով ճակատս, դուրս  
գնաց իր առանձնասենյակը:

Մատախոնությամբ նայեցի նրա յետեկից Ինչպես  
շուրջ և հեղառությամբ կարողացավ ազատվել բա-  
ցատրությունից: Այնուհետև ամեն անդամ նկատում եմ,  
վոր նա ամեն կերպ աշխատում ե խուզս տալ ինձնից,  
իսկ յերբ այդ չի աջողվում, դարձալ սկսում  
ե կատակ անել և, զարմանալի յե, չնայելով վոր այդ  
կատակներն ակամա յե անհւամ (յես այդ շատ լավ եմ  
նկատում), բայց նըանք յերեք անհամ չեն դուրս  
գալիս և միշտ ունենում են իրենց ազդեցությունը,  
գոնե ով այդ ժամանակ նայում ե նրան, մինչև ան-  
դամ յես չելի կարողանում զապել ծիծաղս: Սակայն  
իզուր ե աշխատում ծածկել ինձանից իր վիշտը՝ և  
վոր մի վիշտ—և այն ել ծանր վիշտ — կրծում ե նրա  
սիրտը և մեծ մտատանջություն ե պատճառում նրան-  
— այդ յես գիտեմ, այդ յես պարզ տեսնում եմ: Չեմ  
կարծում, թե նրա վիշտը Գրիգորի համար լինի, վո-  
րովհետև Գրիգորն այնքան ել հրվանդ չե, վորի համար  
կարող լիներ այնքան մտատանջվել: Ուրիշ բան կա-

անշուշտ, վոր մենք չդիտենք։ Մայրս խիստ անհանգիստ եւ ասում եւ, վոր գիշերները նա հանգստություն չունի, իսկ լերբեմն՝ քնած ժամանակ, ասում եւ, կարծես վախեցած, հանկարծ բղավում եւ վեր թռչում, լերբեմն ել լերազում, ասում եւ, ուղղակի լաց եւ լինում...

Մնացել եմ տարակուսած, հինչ են նշանակում այս։  
Բո Աննա Մարոյան.

Ե

Թիֆլիս, 11 հոկտեմբերի 1880

Սիրելի Հոփիսիմե,

Այս անգամ դարձյալ հորս մասին պետք եւ գրեմ, վորովհետեւ բոլոր մտածությանս առարկան նրա տարրինակ զրությունն եւ, վորից մինչև աժմ ել վոչինչ չեմ հասկանում։

Անցյալ կիրակի մեր առւն լեկավ թումաս Գասպարիչը։ Դու ճանաչում ես նրան, այն անատամ, ժամանակից շատ վաղ ծերացած, անտերությունից որպանան ապրող, իր ասելով՝ «ոտստավնոյ տիտուլ լարնի սովետնիկը», վոր վոչ մի որ յեկեղեցուց լետ չի ընկնում և ինչպես ավետարանն ու սաղմոսը, նույնպես և յեկեղեցական բոլոր արարողությունները շատ լսելուց ու կարդարուց անզիր գիտե։ Նա նույնն են մացել, ինչպես տեսել ես նրան յերկու տարի առաջ, ծերության ժամանակ մարդկանց մեջ փոխփոխությունը շատ աննկատելի յէ կատարվում։ Հագուստն ել նույնն եւ, նույն խունացած զվարկը, կարմիր կանտերով, նույն խունացած նշանազգեստը՝ հնությունից սևացած լերկաթե կոճակներով և նույն ձեռնափայտը, վորից նստած ժամանակ անգամ չի բաժանվում։ Յեղանակը,

չնալելով աշուն եր, շատ տաք եր։ Յես նախած եյի սենյակումս՝ բաց լուսամուտի առաջ և կարդում եյի Ծուրդենեվը։ Յեղբայրներս տանը չելին, մայրս խոհանուցումն եր, իսկ հայրս զուրսը պատշդամբում։ Նա նստած եր լուսամուտից հեռու՝ մեջքը դեպի ինձ արած և մտախոն նախում եր քաղաքին։ Յերեվի, չգիտեր թե լես տանն եմ և նախում եմ իրեն, ապա թե վոչ աչքերիս առաջ անձնատուր չեր լինի իր տիսուր մտածմունքներին։ Բայց նա այն աստիճան խորապուզված եր մտածմունքի մեջ, վոր չնկատեց, թե ինչպես թումաս Գասպարիչն իր դանդաղ, լերերուն քալերով մոտեցավ նրան։

— Շատ խորն ես մտածում, աղա Գեվորգ, — կարձ ժամանակ նրա մոտ լուռ կանգնելուց հետո ասաց թումաս Գասպարիչը, իր բութ հայացքով կողքից շառունակ նայելով նրան։

Հայրս հանկարծ սթափվեց և նայեց նրան։ Առաջին նվագ, կարծես չկարողացավ ճանաչել նրան, վորովհետեւնախ մի բռպե, ըստ լերեվութին զարմացած և լուռ նայեց նրա դեմքին, հետո հանկարծ բացականչեց։

— Ա՛, թումաս Գասպարիչ, ալդ գնել յես... Բարե (ու մեկնեց նրան ձեռքը), ի՞նչպես ես։ Թիֆլ լա՞վ եւ Համեցիր, նստիր (Նա կանչեց ծառային, վոր մի աթոռ բերի)։ Նոր լուր կունենաս, ասա սեսնենք։ Անպատճառ լեկեղեցուցն ես գալիս։

— Բաս գիրտեղից պետք եւ գամ, — մը մը մը թաց թումաս Գասպարիչը, կարծես նեղացած, վոր այդ բանի համար դարձյալ հարցնում են իրան։

— Իհարկե ինձ համար ել կաղոթելիք։

— Անպատճառը՝ թեղ համար ել վոր չաղոթեմ, աղա Գելորդ, բաս ել մեմ համար պետք ե աղոթեմ:

— Թեղ համար:

— Ե, ամեն մարդ վոր մենակ իր գիւի մասին մտածի, այդ մեր կզնա:

— Իր զրպանն ու փորը... Բայց ասա տեսնենք՝ աղոթիդ մեջ ինչ ելիր խնդրում ինձ համար:

— Ի՞նչ... Այ ինչ, - ասաց Թոմաս Գասպարիչը, նստելով ծառալի բերած աթոռի վրա: — Նախ և առաջ խնդրում ելի, վոր ամենակարող աստված քեզ և ընտանիքիդ յերկար կանք տա... «Կյանքս խնդրաց ի քեն, և ետուր նման ընդ լերկան ավուրս՝ հավիտյալս հավիտենից»: Յերկար կանքն իհարկե, ամեն բանից լավ ե, այդպես չե, աղա Գելորդ:

— Իհարկե... շարունակիր:

— Հա, նախ և առաջ խնդրում ելի, վոր ամենակարողն աստված քեզ...

— Հեր որհնած, այդ խո ասեցիր, — անհամբերությամբ և միքիչ ել զղայնացած ընդհատեց նրան հայրս: — Շարունակիր:

Թոմաս Գասպարիչը տարակուսանքով և զարմացած նայեց նրան, առաջին անգամն եր, վոր հայրս նրա հետ այդպես եր խոսում:

— Հետո խնդրում ելի, — շարունակեց նա այս անգամ փոքր ինչ անվատահ լեղանակով, — վոր ամենակարողն աստված քեզ և ընտանիքիդ...

Ելի, — նորից ընդհատեց հայրս նրան անհամբերությամբ:

— Զե, աղա Գելորդ, շարունակում եմ, — շտապեց պատասխանել խեղճ Թոմաս Գասպարիչը, — ... վոր

ամենակարողն աստված քեզ և ընտանիքիդ յերկար կյանքի հետ առողջություն տա... յերկար կյանքն առանց առողջության, ՚իհարկե, մի կոպեկ չարժե, այդպես չե, աղա Գելորդ:

— Այդպեսէ, այդպես... շարունակիր, — մեքենայաբար կրկնեց հայրս, առաջվա նման մտախոնությամբ բառ կրծիլով քաղաքին: Նա կարծես այլու չեր լսում թումաս Գասպարիչին:

— Հետո խնդրում ելի, — շարունակեց Թոմաս Գասպարիչը, — վոր ամենակարողն աստված գործիդ հաջողություն տա, սրտել բարի ցանկություններին կատարումն տա, ուբախություն, յերջանկություն տա, վորդոցդ բարի միտք և սիրտ տա, վոր քեզ սիրեն, հարգեն, պատվեն... Խնդրում ելի, վոր քեզ և բոլոր ընտանիքիդ ամեն չարից հեռու պահի, ստանալի փորձությունից աղատ պահի, թշնամուսրտով յանեն, «փրկյա զիս և ձեռաց թշնամյաց և ի հալածչաց իմոց». Խնդրում ելի, վոր իր սուրբ վաղորմությունը միշտ անպակաս անի քեղանից և քո ընտանիքից օվողորմություն քո, տեր, զհետ իմ լեկեսցե զամենայն ավուրս կենաց իմոց»...

Նա լսեց և կարծես նոր տեսավ, վոր հայրս վոչ նայում եր և վոչ լսում նրան: Նո գլուխը փոքր ինչ թեքելով, առաջ տարալ, վորպեսզի լավ նաևի հորս դեմքին, վոր ամբողջապես գեպի քաղաքն եր դարձած:

— Հը, ինչ ե... պրծմար, մտախոնությունից սթափվելով և դիմքը գեպի նա գարձնելով, հարցրեց հայրս:

— Յես պրծմա, աղա Գելորդ, բայց դու ինձ չեմիր լսում, կարծես:

— Կարծես, — հարեց հայրս ծաղրական յեղանակով:

— Ընդհակառակն, իմ պատվելի տիտուլարնի սովորնիկ, յես քո պատմածն ավելի լավ ելի լուսմ, քան թե դու ինքդ... Բայց այդ թողնենք, ուրիշ բան խոսենք... Ինչ նոր լուր ունես, ասա տեսնենք:

— Ե՞ս, աղա Գևորգ, յես ինչ նոր լուր պետք ե գիտենամ. բացի յեկեղեցուց, ուր եմ գնում, վոր ինչ լսեմ... Լրագիրը դուք եք ստանում, նոր լուրերը դու կինես կարդացած:

— Այս քանի ժամանակ ե, ինչ ձեռքս լրագիր չեմ առել... Ապա գնա տես, սեղանի վրա կլինի լրագիրը, բեր, կարդա մոտս... Սպասիր, լավ, դու նեղություն մի կրիր, ծառան կրերի:

Նա դարձյալ կանչեց ծառային և հրամայեց, վոր Մագիրը բերի:

Յես լուսամուտից տվեցի ծառային լրագրի համարը: Ծառան տարավ տվեց Թոմաս Գասպարիչին:

Թոմաս Գասպարիչը նախ հանեց ակնոցը, վոր պահում ե, ինչպես գիտես, առանձին պատշաճի մեջ, դրեց աշքերին և սկսեց կարդալ Կարդաց մի քանի լուր, թե ինչպես մի յերիտասարդ անհայտ պատճառներից այսինչ տեղն և այսինչ ժամանակ անձնասպանություն ե գործել («սիրահարված կլիներ» այստեղ նկատեց հայրս), թե ինչպես մի կին մի անգամից յերեք յերմխա յեծներ յերեքն ել կենդանի, թե ինչպես այսինչ տեղ ավազակները ճանապարհին կողոպտել և սպանել են ճանապարհորդներին, թե ինչպես այսինչ հալտնի վաճառականը մնանկացել ե, նրա բոլոր կայքը գրավել, աճուրդով վաճառել են...

Հայրս սկզբում, ըստ յերեվութին, հետաքրքրությամբ եր լսում Թոմաս Գասպարիչին, բայց վերջինս

այնքան դանդաղ և անվարժ եր կարդում, վոր նա շատ շուտով ձանձրացավ և դեմքը դարձյալ շրջեց դեպի քաղաքը: Սակայն, ինչպես նկատում եյի, այնուամենակի լսում եր և լսում ինքն իրեն ստիպելով. կարծես չեր ուզում անձնատուր լինել մտախոհությանը, վոր, ինչպես յերեվում եր, ակամա պաշարում եր նրան: Վերջ ի վերջո դարձյալ սկսեց հետաքրքրությամբ լսել և զարմանալի լե, նրա հետաքրքրությունն այն աստիճանի հասավ, վոր մինչև անգամ դարձավ թումաս Գասպարիչի կողմը, ալմունկով կոթնեց ծնկան վրա և սկսեց շեշտակի նաև ել նրա շվթունքներին: Այս անգամ տեսնում եյի նրա դեմքը և լերեք չեմ կարող մոռանալ այն հայացքը, վորով նայում եր այդ ժամանակ, այդ հայացքի մեջ կար և մեծ հետաքրքրություն, և մեծ յերկյուղ, և մի տեսակ բան, վոր վոչ կատաղություն եր, վոչ ստրշանք և վոչ հուսահատություն: Վերջին լուրը լսելով, հանկարծ այնպիսի ուժով դուրս խեց լրագիրը թումաս Գասպարիչի ձեռքից, դուռալով — «ինչ վատ ես կարդում» — այնպես ձղեց և ձեռքում ձմելով շվրտեց պատշգամբից ներքե, վոր կարծեցի, թե խելագարվեց: Ինքս ել չիմացա, թե ինչպես այդ ժամանակ զլուխս հանեցի լուսամուտից զեպի դուրս և նաև եցի նրա կողմը: Նա հանկարծ տեսավ ինձ, և յես մինչև հիմա յել զարմացած եմ մնացել, թե ինչպես այնպես արագ կարողացավ փոխել դեմքի արտահայտությունը. ձեռքը վայր թողած, կանգնեց հանդարտ, աչքերը խոնարհեց, ներքին շուրթը կախեց վարտ, աչքերը խոնարհեց, ներքին շուրթը կախեց (ինչպես այդ արավ մի անգամ, յերբ հարցը նրա մտահոգության պատճառը) և ասաց բարակ, իբր թե մանկական ձայնով:

— Յես ինչ մեղավոր եմ, որիորդ քաս ինչու թումաս Գասպարիչը այնպես վատ և կարդում...

Բայց այս անգամ չծիծողեցի, ինչպես առաջ արդյոք նրան համար, վոր արդեն հասկանում ելի, թե ինչ են նշանակում նրա այլպիսի կատակները, թե նրա համար, վոր այս անգամ նրա կատակը բավական անհամ դուրս էեկավ, — չգիտեմ: Այդ կարծես ինքն ել զգաց և, մի բոպե շվոթվելով իմ անթարթ, լուրջ հայացքից, հանկարծ նայեց թումաս Գասպարիչին և բարձրաձայն ծիծաղեց:

— Աննա, — բացականչեց նա, առանց իմ կողմը նայելու, — թե աստվածդ կսիրես, մեկ նայիր մեր տիտուլյարնի սովետնիկին:

Նայեցի թումաս Գասպարիչին, բայց դարձյալ չծիծաղեցի, թեև այդ բոպեին նա շատ ծիծաղելի եր: — Նստած եր անշարժ՝ ակնոցները տչքերին և կատարյալ ապուշի նման բերանը բաց, նայում եր հորս: Նրա ձեռքը մասցիլ եր այնպես, ինչպես վոր բռնած ուներ լրագիրը կարղավիս: Կարծես նրան դիտմամբ նստեցրել ելին այդ զրոթյան մեջ, վորպեսզի հանեն նրանից մի ծաղրական պատկիր: Հորս բարձրաձայն ծիծաղեց նա հանկարծ սթափվեց և ժպտուլով դարձավ ինձ:

— Տեսնում եմ Աննա, ինչ չարաճնի մարդ և յեղել հայրդ, — ասաց գլուխը շարժելով: — Լուսպիրը ձեռիցս խլեց, ձղեց, ձմլեց, պատշդամբից ներքե դցեց: ասա ինչո՞ւ...

— Նրա համար, իմ պատվելի տիտուլյարնի սովետնիկ, վոր... ձաշին մեզ մոտ կլինես, — ասաց հայրս և գնաց գեղի իր առանձնասենյակը:

Դիտմամբ այս անցքն ալսպես մանքամասն նկա-

բագրեցի նամակիս մեջ, սիրելի Հռեփսիմե, վորպեսզի ցուց տամ, թե վորքան մեծ և այն գաղտնի վիշտը, ցուց տամ, թե վորքան մտատանջություն պատճառելով, այսպիսի դրության մեջ և ձգել հորս:

Ինչպես վախենում եմ, թե մի գուցե խելագարվի... Սարսափի, անսակի վիշտն ու հուսահատությունը պաշարում ե ինձ, վոր մտածում եմ, թե կարող ե այդպաշարություն պատահել... Բայց ինչ անեմ, պիսի դրախտություն պատահել... Ինչ անեմ, ինչնիվ կարելի յե այդ դժբախտության առաջն առնել...

Սրտիս վատ նախազգացումներից իս ավելի եմ սար- սափում...

Ըսդունակ ջերմ համբուլըներս:

Գո Աննա Սարոյան.

## Զ

Թիֆլիս, 23 Կոյեմբերի 1880

Անգին քուէրիկ,

Գուշակությունս ճիշտ դուրս յեկավ. — Դժբախտությունը — և այն ել ինչպիսի դժբախտություն — առաջին անգամ բաց արակ մեր տան դուռը և ներս մտավ. ին անգամից զրկվեցինք մեր բոլոր կարողությունից, մեր բոլոր հարստությունից. հայրս աջ ձեռքով անդամալուծ յեկավ և խելագարվեց: — Ահա թե ինչ վեղավ նրա բոլոր մտատանջությունների, նրա գաղտնի վշտի, նրա ոտարության հետեւանքը: Իսկ պատճուղը հորս պարտքերն են յեղել, վորոնց գոյության մասին մենք նույնքան տեղեկություն ունելինք, թյան առաջին մենք նույնքան տեղեկություն ունելինք, թե մեր վորքան աեղեկություն ունելինք:

ալսպիսի սարսափելի փորձանք պետք ե գա... բայց  
մինչև հիմա ել զարմանքից չե կարողանում ուշըն  
գալ, թե հայրս այնքան պարտք լի՞րը ե արել, և ինչ բա-  
նի համար... Մալրս ասում ե, վոր նա մոլի խաղացող  
եր, այդ յես ինքս ել գիտելի, բայց միթե խաղալով  
այդքան պարտք են անում, այդքան տանուլ են տա-  
լիս... Վհչ, վհչ, յես այդ բանին վոչ մի կերպ չեմ  
ուզում հալատալ և իբրեք ել չեմ հալատալ... Գուցե,  
այս, ուրիշ մարդիկ այդպես անեն, բայց իմ հայրը...  
Դու խո քիչ թե շատ ճանանչում ես հորս, դու խո գի-  
տես, թե վորքան ազնիվ, պատվասեր և հեռատես  
մարդ եր նա, միթե այդպիսի գեղեցիկ հատկություն-  
ներ ունենալով, նա կարող եր չհասկանած թե ապա-  
գայում ինչ սարսափելի հետեւնքներ կարող եր ունե-  
նալ խաղալու սերը, ի՞նչ, մինչ ե այդ սիրո, այդ մո-  
լության զորությունը, մարդիկին բոլոր գեղեցիկ  
հատկությունները կորցնեմ են իրենց ուժը գրա ա-  
ռաջ, այո՞, ճիշտ ե այդ, հալատալո՞ւ յե այդ... Ով  
ուզում ե, թող այդ ճիշտ համարի, ով ուզում ե թող  
հավատա գրան, բայց յես չեմ հավատում. չեմ հավա-  
տում, վորովհետեւ այդ անկարելի յեմ համարում գոնե  
նորս վերաբերմամբ... Ա՛խ, մի կարծիք, թե վորդիա-  
կան անհուն սիրուց կուրացած միայն յես պաշտպա-  
նում եմ հորս. վհչ, ամենքը, ամենքն ել, ով ճանա-  
չում ե նրան, կասեն, վոր հայրս աղպես թեթևամտու-  
թյամբ չեր կարող վերաբերվել դեպի իր և իր ընտանիքի  
լերջանկությունն ու պատիվը՝ վորքան ել նրա մեջ  
բուռն ցանկությամբ գործեր խաղալու սերը, մոլու-  
թյունը:

Յես ճանաչում եմ հորս, ինչպես ինքս ինձ. նրա

բնավորության բոլոր կողմերը, նրա հոգին բաց եր  
իմ առաջ, վորպես մի պատկեր՝ իր պարզ ու վորոշ զծե-  
րով, և յես համարձակ, առանց կուլը կողմնապության  
ողետք և ասեմ, վոր նրա պես ընտանիքը պաշտող և  
նրա պատվի համար զլուխը լիտ դրած մարդ ճրագով  
պիտի վորոներ. Ամենավաղ մանկությունիցս, զիտակ-  
ցությանս բացվելու որից սկսած մինչև այժմ դեռ չեմ  
հիշում գեթ մի որ, վոր նա մի վատ խռոք ասած լիներ  
մորս, կամ մեղ — իր զավակների վրա ձեռք լիներ  
բարձրացրած. Նա մեղ պահու և միշտ սիրո և խաղա-  
ղության մեջ, աղատ ընտանիքան ամեն տեսակ  
տարուծայնություններից և իբրևառակություններից,  
նա մեր ամենաշնչին կտարիզներու անգամ անտրտունջ  
բավարարել և և ընտանիքի լերջանկության ու պատ-  
վի նախանձախնդիր նրա սրտի մեջ մենք միշտ հովա-  
նի կանոր ենք գտել Յեվ արտ բուռից հետո, ասմ,  
սիրելիս, միթե յես իրավունք ունեմ թիկուզ յեն-  
թաղերեւու, վոր այդ միենաւէն հայրս, միշտ անփոփոխ  
և անտցել իմ աշքում (և յես կիերդվեմ, վոր չեմ խաբ-  
վել), իր ընտանիքի լերջանկությունը, պատիվը, ա-  
պագան, ամեն ինչ, վորոնց համար կյանքը յետ ուներ  
դրած, այդ կես թիվեամտորեն - տանուլ տար կանաչ  
մեղանի վրա...

Ա՛խ, վորքան ծանրե, սիրելի քուլիկ... վորքմն ծանր  
ե, Այսքան ժամանակ լոչ մի ծանր լիշտ տեսած լինելով  
ընտանիքի մեջ, այժմ այս ասսկալի գժբախտության  
առաջ զգում եմ, վոր հոգիս շատ հեշտությամբ և ընկճ-  
վում... Յեվ կարելի յե միթե անվեհերությամբ գետ  
գնալ ճակատպրի մի. ասպիսի հարվածի. Ո՞վ ե  
ուշաղրություն դարձնում, թե զրկվեցինք մեր բոլոր

կարողությունից. զբա մասին չեմ ել մտածում կամ չեմ ափսոսում, այլ հայրս, հայրս, իս տանջվում եմ հորս համար: Յես և մեր բոլոր ընտանիքը կորցրինք մի այնպիսի հայր, վորպիսին կարող չե տալ աշխարհն իր բոլոր գանձերով: Յեվ դեռ փառք աստուծո — այս —, փառք աստուծո, — վոր կաթվածն այնքան սաստիկ չեր, ասլա թե վոչ, նա կարող եր բոլորովին անդամալույժ դառնալ կամ իսկուցն մեռնել:

Բայց ամենից ավելի ինձ տանջում, հուսահատեցնում ե այն հանգամանքը, վոր նրա խելքն ալլիս զվսին չե: Արդյոք հասկանում ես, չերեակայթում ես, սիրել քուրքիկ: Մե ինչ և նշանակում խելագարված լինել — Այդ նշանակում ե լինել մեծ մարդ և մրենուն ժամանակ — յերեխա: այդ նշանակում ե անել այն, ինչ վոր շուրջդ վոչ վոք չի անում, և չի անի այն, ինչ վոր շուրջդ ամենքն են անում: այդ նշանակում ե հիմարների ծաղրի և խելքների խոճանարության թրշավառագույն առարկա լինել: այդ նշանակում ե բնությունից անարդված լինել, մարդկանց իրավունքներից զրկված լինու, ապրուների ցանկից գեռ կենդանության ժննջած լինել: այդ նշանակում ե հազարավոր ապրուների մեջ ապրել իրեկ առանձին մարդ, ինչպես մի ամայի անապատի մեջ, վորտեղ շրջապատգ գեղիք լուռ ե և խուլ ե, վորտեղ դռ ինքդ շրջապատիդ համար լուռ ես և խուլ այդ նշանակում ե տեսնել և չճանանչել, լսել և չիւանալ, ապրել և չզգալ: այդ նշանակում ե կը եր շունենալ — կյանքի խորհրդի այդ բանալիները: Սոսկա ի ե, սասկալի... .

Ներիր, սիրելի Հռիմիմե, նամակս յերկար չեմ

կարող շարունակել: — ամբողջ հոգեկան աշխարհս փշլրոված ե:

Քո Աննա Սարոյան.

Ե

Թիֆլիս, 7 դեկտեմբերի 1880

Իմ քաղցրիկ ընկերուհի,

Ծնորհակալ եմ ցավակցությանդ համար: Այս, լավ կիներ, շատ լավ լիթե մոռա լինելիր: զգում եմ, թե վնրքան կթիթևանար սիրառ ալլդ ժամանակ բայց աղտեղից հեռանալդ անկարելի լիս համարում: Ինքս ել գիտեմ, վոր ալդ անկարելի յե, վոր ալդ քեզնից չի կ'սիսած, և ալդ պատճառով յերեք չելի կամենալ, վոր մի ապակիսի մեծ զոհաբերություն անելիր ինձ համար: Վհաս չունի: Այն ել բավական ե, վոր մեր սրտիրը կապում ենք իրար հետ նամակադրությամբ:

Մեր նախկին բնակարանից աեղափոխվեցինք. նա ալլես մեղ չի պատկանում: Այնակից մեղ վանդեցին, — գուցե ալդ վերջին բառը քեզ շատ կոպիտ յերեա, բայց ալդ ալղակս ե, — մեղ վանդեցին քաք ոքագարի կերպով, և սեղ համար ալդ առավել ես զզալի յեր... Յերանի նրան, ով չի զդացեր թե ինչ և նշանակում իր նախկին բնակարանից վերջականապես տեղափոխվել և այն ել ինչպես, — ստիպված, ակամա: Խօկույն զգում ես, վոր սրտիցդ մի բան կտրվում ե, ինչպես այն ժամանակ, յերբ սրտակից բարեկամիդ հավիտյան մնաս բարե ես անում: Տան պատուհանները, գոները, պատիրը, յուրաքանչյուր աղյուսը, ակնտեղ ընկած լուրաքանչյուր մի ծեղ զգում ես, վոր անզին և քեզ համար և զու վոչ մի կերպ չես ուղում բաժանվել:

անջատվել նորանցից ընդմիշտ Ալն, շատ գժվար ե, ծանր ե, դառն ե հավիալան թողնել և առավել ես կոնդված լինել այնտեղից, վորտեղ ծնվել և անց ես կացրել մանկությանդ վոսկի, ժամերը և վորտեղի համ կապված են կյանքի ամենաքաղցր հիշողությունները.

Այժմ մենք բնակվում ենք մեր կին տանը, վոր մի կերպ կարողացանք աղատել պարտապահների ճանակրից! Դու տեսել ես այդ տունը՝ լիու ընկած փողոցում, խոնավ, մասվար պատերով, վորոնք կարծես միշտ լաց են լինում: Ամեն անգամ, վոր մտնում եմ այս տան սենյակները, մի տեսակ անրացատրելի: Ճանր, սաստիկ ճանր թափսիծ պատում և սիրոս, հուսահատությունն ու կատաղությունը միաժամանակ պաշտում են ինձ և դառն արտասուքը ակամա խեղզում ե կոկորդս...

Այս, Հոփիսիմե, անդին քուլրիկս, վորքան դամն, վորքան անտանելի լե կյանքը. . Գոնե նա այնքան չնշին չլիներ, գոնե նա ունենար մի մեծ ն անակություն, մի մեծ նպատակ վորի համար արժենար կրկի նրա տված ալյօֆան դառնությունները... Վոչնչի համար չարաչար տանջիկ, — միթե մարդու դրա համար և միայն ծնված... Միթե մարդուս կյանքը, վոր վերջանում ե վոշնչով, նրա խորհուրդն ել պետք ե լինի նույնպես վոշինչ... միթե... Ենչպիսի մոալլ մտքիր են պաշտում ինձ... Մտածությանս թելլ խճճում ե և հանկարծ կտրվում... Վոչնչություն, վոչնչություն...

Ցերեկ ամրող մտավոր և հողեկան աշխարհս անսպիսի մի հուզմունքի միջ ընկապ, սիրելի Հոփիսիմե,

8 զեկուեմբերի

վոր նամակս չկարողացաւ շարունակել, գրիս վայր զցոցի, զորս գնացի և ինքս ել չգիտես, վարտեղ և վարքան ժամանակ, սկսեցի թափառել վերջին ժամանակներս ալզպի ի ոտությունի հուզմունքներ ինձ շատ հաճախ են պատահում: Չնայելով, վոր իս վոչ մի կերպ չիմ ուզում նրանց անձնատուու լինել, բայց նրանք ակամա հափշտակում են ինձ. Յեվ, զորւանալի լե, չնայելով, վոր այդ հուզմունքները ծանր, շատ ծանր են լինում, բայց այնուամենանիլ մի տեսակ անրացատրելի թեթիություն են տալիս. — ուրիշ կերպ թնչպիս բացատրեմ հոգեկան այն դրությունը, վոր ստոնում եմ այբախի հուզմունքների ժամանակ. — մաքերի միջ իսրասուզված նայում եմ շուրջությունին, յերկրին, ամրող ընությանը, նայում եմ մարդկանց. կինդաններին, թոշուններին, միհատներին, նայում եմ, նայում և հանկարծ զգում եմ, վոր մի տեսակ հագու կան ժպիտ ակամա ծամածում և գեմքու Վոչնչություն. վոչնչություն. վոչնչություն, — արտասանում եմ ինքս ինձ և զգում եմ, վոր սրտիս միջ ալլ ես վոչ մի փիշտ, վոչ մի դառնություն չկա. մարդկարին զգացողական բոլոր կարողություններս կարծես, միանգամից գագարում են զործելուց կամ վոչ մի կարիք չեն ունենում զործելու Հավատը, հույսը և սերը, վորոնք մարդկարին կլանքի հիմունքն են համարվ ւմ, կարծես փրկում, չքանում են իմ միջ և այնուհետև ամեն բանի. մինչեւ անգամ մեր թշվառության վրա սկսում եմ նայել խորին սառնասրտությունը, նույնիսկ արհամարհան բով... Սակայն բարեբախտարար, թե գժրախտաբար, ալդ յերկար չի տեսում, սակագ տռ սակավ այդ տարօրինակ զրությունից զուրս եմ գալիս

Դորի միջոցին լեռքեմնակի սարսափի նման մի տեսակ անբացարելի սարսուռ ցնցում և վողջ մարմինս, կարծես մի ինչ վոր վոճագործություն լինեմ կատարած... ի վերջո, առաջվա վիշտն ու դառնությունը նորից պաշարում են ինձ, հոգիս նորից ընկճվում ե, նորից սկսում եմ տանջվիլ... Վորքան զարմանալի լե մարդկային հոգիկան աշխարհի, վորքան մութ, վորքան անբացատրելի և անիմանալի խորշեր ունի նա:

Հորս զրությունը նույնն է, ինչ վոր առաջ Նա բոլորովին խելագարված ե, բայց նրա խելագարությունը շատ հանդարտ ե, վորի պատճառը, կարծում եմ, անդամալուծությունը պիտի լինի. չի կարողանում պատ շարժումներ գործել կամ ազատ խոսել Սակայն վերջին որերս ձեռնափայտի կամ իմ և մորսունությամբ կարողանում ե կամաց ման գալ տանը, հազիվ շարժելով վոսները նա վոչ վորի չի կարողանում հանաչել. պատահում ե յերեմն, վոր մայրս կամ յեղարներս մտնում են նրա մոտ, սկսում են խոսել նրա հետ, հորդյունում են՝ ճանանշեւմ ե իրենց. նա անթարթ, կարծես ամենայն մտառությամբ նայում ե նրանց դիմքին, առողջ ձեռքում միշտ խաղացնելով թաշկինակը, զեմքը դրյում ե նրանցից և չի պատասխանում: Ինձ ել չի ճանաչում, բայց ինձ հետ սիրով և քնքուշությամբ ե խոսում: Յերբ մտնում եմ նրա մոտ, ինչպես նկատում եմ, ուրախանում ե, բայց յեթե ամբողջ որով չերենամ ել աչքին, չի հիշի: Խոսակցությունը անմիտ ե և անկապ, հարցերին պատասխանում ե, բայց վոչ այն, ինչ վոր ուղղակի աղդ հարցերին ե վերաբերվում, այլ բոլորովին ուրիշ բան: Ինձ միշտ սիրուն աղջիկ ե անվանում, անունս մոռա-

ցել ե և, չնայելով, վոր ամեն անգամ հիշեցնում եմ անունս, ասում ե և իսկույն ել մոռանում: Մի անգամ միայն, — այն ել հաղիվ լերկու բողե, — ճանաչեց ինձ և լաց լեղավ: Սակայն վերջին որերումս, ինչպես նկատում եմ, ուշըը քիչ-քիչ սկսում ե գլխին զար, անցյալից մի-մի բան հիշում ե և նույն բողեին ել մոռանում, իսկ առաջ բոլորովին վոչինչ չեր հիշում: Այդ ինձ հույս ե տա իս, վոր վերջ ի վերջո դուցի առողջանա: Բժիշկն ել հույս ե տալիս, բայց ասում ե, կառողջանա վոչ բոլորովին: Թնդ, թնդ ինչպես կուղե առողջանա, միայն թե ներկա գրության մեջ մինչեւ վերջը չահսնեմ նրան: Դու չես կարող լերեակայիել, անզին քուլրիկ, թե ինչ սոսկալի, ինչ անտանելի տանջանք եմ կրում իս, լերբ ամեն անգամ, մտնեռի նրա մոտ, հանդիպում եմ նրա միշտ անմտորեն ժըպտող հայացքին և լսում եմ նրա նույնքան անմիտ թոթովանքը...

Անցյալ որն եր: Ինչպես միշտ, նույնպես և այդ առավոտ մտա նրա սենյակը: Մորս և ծառաչի ողնությամբ արդեն հագնվել և լվացվել եր (առավոտները նա միշտ վաղ ե զարթնում: առօսարակ շատ քիչ և քնում): Յերբ ներս մտա, նստած եր մահճակալի վրա և թաշկինակն՝ իր սովորության համեմատ, խաղացնում եր ձեռքին: Ինձ տեսնելուն պես դեմքը խոժառեց (այդ առաջին անգամն եր, վոր ինձ ալրդակես եր համ դիպում) և հետո, լերեկ ճանաչելով, ժապաց և, բարեկելու փոխարեն, թաշկինակը քնքորեն իմ կողմը գցեց: Իսկույն բանիցի թաշկինակը, նախքան գետքն կընկներ, և նստեցի նրա մոտ, մահճակալի վրա:

— Հարիկ, ի՞նչպես ես այսոր, — հարցրի՝ թաշկինակը տալով նրան,

— Լավ եմ, — պատասխանեց իր մշտական, բայց այս անգամ, կարծես, աւոթիսած ժպիտով և թաշկինակը նորից սկսեց խաղացնել ձեռքին:

Հարցիս տված ուղղակի պատասխանն ինձ շատ ուրախացրեց:

— Բայց ի՞նչդ ե ցավում, հարիկ, — հարցրի, այս անգամ, կամ այ գրկելով նրա մեջքը:

Նայեց դիմքիս: Այլիս չեր ժպտում:

— Ի՞նչ, — հարցրեց կարծես, խորին մտառությամբ:

— Ասում եմ՝ ի՞նչդ ե ցավում, վճրտեղդ ե ցավում, նորը հառաչեց և հայացքը դաւձրեց գեպի լուսամուտը:

— Շատ վատ, շատ վատ, — արտասանեց կամաց, այնքան սրտառուչ ձայնով, վոր աչքերս լցիցին արտառություն: Յես ալիք ամուր գրկեցի նրա մեջքը և յերկար ժամ համակ զոչից չկուրողացա արտասանելու նա թաշկինակն ալլս չեր խաղացնում ձնաքին և կարծես տիսոր մտածմունքների մեջ ընկղմված, շարունակ նայում եր գեպի լուսամուտը:

— Հարիկ, ինձ չես ճանաչում, — հարցրի վերջապես նորից նայեց ինձ, կարծես, աշխատելով մտաբերելու, թե ով եմ:

— Վոչ, — պատասխանեց միայն:

— Յսս Աննան եմ, հարիկ, յես քո աղջիկն եմ,

— բացականչեցի:

— Յես աղջիկ չունեմ, անտարրերությամբ արտասանեց և դիմքը նորից գեպի լուսամուտը դարձրեց:

— Ուսես, ուսես, հայրիկ, ի՞նչպես չես ունես

աղջիկ, — այդ յես եմ, յես քո Աննան եմ, մի թե ինձ չես հիշում:

Նա նույն անտարբերությամբ զլուխը շարժեց միաւն և վոչինչ չպատասխանեց: Հուսահատությունից, վշտից և անզորությունից պատրաստ ելի աղիողորմ լաց լինելու, բայց կարողացա զսպել ինձ:

Ցերկար ժամանուկ մենք լուս ելինք: Առաջվա անորոշ մտախոհությամբ շարունակ նայում եր գեպի լուս սամուտը, իսկ յես անթարթ նրա դիմքին: Վորքան քաղցր բան եր հիշեցնում ինձ այդ գեմքը, այդ զրբավիչ, այդ սիրուն, այդ փափուկ, քաղցր, միշտ ժպտող դիմքը, վոր առողջ ժամանակ (հիմա ել) նայողին, կարծես, գղվում, փալփայում եր և ակամա քարշում գեպի ինքը, սիրեցնու տալիս իրեն: Ցերեակալությանս մեջ կենդանի կերպով և զիծ տո զիծ ներկալանում ելին նրա այնքան ծիծաղիլի ծամածությունները: Վոր նա տալիս եր իր դիմքին կատակ անհելա: Վորքան առզում ելին նրան այդ ծամածությունները, վորքան շնորհով եր անում նա իր կատակները և վորքան սիրում ելի ալդ... Հենց վոր սկսում եր իր կատակները, յես սկսում ելի ծիծաղիլ ծիծաղում ելի անդադար: մինչե վոր մարմինս թուլանում եր, սիրու ցավում և աչքերս ջրակալում ելին: Մի անգամ նստած ելի դաշնամուրիս առաջ և նվազում ելի, յերբ հանկարծ, կիտած հոնքերով շտապով ներս մտավ և մոտեցավ ինձ:

— Աննա, քեփս խորար ե, — ասաց, իրրե մի անախորժ բանից նեղացած: — թե արեգ կոիրես վեր կաց, ուղում եմ «Ենթիսինքի սինատն» ածել:

«Ենթիսինքի սոնատը» բառերի գիտությամբ այդ

աղավաղված արտասանությունը լսելով, թողի դաշնամուրի ստեղունքները և ծիծաղից թուլացաւ: Նա սկսեց ծաղրել ինձ իմ ծիծաղիս նմանեցնելով: Թրանից ծիծաղս ավելի սաստկացավ: Նա նույնպես սաստկացրեց իր նմանողական ծիծաղը: Յես չկարողացա դիմանար վեր թռա և կործած դուս փախա սենյակից:

Այս, ինչքան լով ժամանակ եր այդ. ինչքան յերջանիկ եր նա, ինչքան յերջանիկ եյի էս, ինչքան յերջանիկ եյնք մինք ամենք... Իսկ այժմ... այժմ... Յերջանիկ, բայց անդունալի անցյալի և թշվառ ներկայի դառն զիտակցությունը հաճկարծ այնպիսի սաստկությում ճմլեց սիրտս, այնպես ճմլեց, վոր չեմ հասկանում, թե ինչպես կարողացա դիմանալ այդ անսեկի տանջանքին: Յերկար չկարողացա մնալ նրա մոտ, արտասուքն արդեն խեղում եր ինձ. դուրս յեկա և ինչպիսի գառնությամբ վողբացի մեր յերջանիկ, անդանալի անցյալը...:

Հնդունիր վողջունս, իմ անդին քուլրիկ:

Քո Աննա Սարոյան.

Ը

Թիֆլիս, 14 դեկտեմբերի 1880

Սիրելի Հռիփսիմե,

Հորո ցավալի դրությունն այն աստիճան զբաղացնում եր ինձ, վոր մեր ընտանիքի մասին վիճակի մլուս անդամների մասին վերջին անդամներս վոշինչ չեյի դրում քեզ Բայց նախ պետք ե ասեմ, վոր նորս դրության մեջ վոչ մի փոփոխություն չի կատարվել դեպի լավը Նա դարձեալ վոչվագի չի ճանաչում: Մարս, վոր սկզբնե-

րում սաստիկ վշտանում եր և համարլա միշտ լաց եր լինում, այժմ, կարծես, հաշտվել ե իր դրության հետ, և այս վոչ մի տրտունջ չեմ լուս նրա բերանից: — Նա, կարծես, տեղն ու տեղը սառել ե: Ամեն որ վաղ առավոտաւն նշնում ե նորս մոտ, հազյնում ե, լացվել ե տալիս նրան, թեյ ե խմեցնում, ձեռքից բռնած սենյակում մի քանի անգամ անց ու զարձ անել ե տալիս, կեսորին իր ձեռքով ճաշ ե ուտեցնում և յերեկոյան դարձյալ թեյ, գիշերը հանում պառկեցնում ե քննելու, և այդ բուրը կատարում ե լուս: Երբեմն միան խոր հառաչում ե: Ծատ անգամ զիշերները լուսացնում ե հիվանդի մոտ՝ աթոռի վրա, չնայելով թախանձանքին, վոր այդպաշտոնի կատարումը ինձ թողնի Ամեն անգամ, քանի նալում եմ նրա գունատ, նիհարած գեմքին և անկենդան աչքերին, վշտից և կարեկցությունից սիրտս ճմլվում ե: Յերկարակայում եմ, թե վորքան մեծ պիտի լինի այն լուս վիշտը, վոր բռնի և դրել նրա սրտում:

Սակայն միայն հորս գրությունը չե, վոր նրան ալղոթես տանջում ե, Գրիգորի գրությունն ել պակաս մատանջության առարկա չե նրա համար: Նամակներից մեկի մեջ, կարծես, գրել եյի քեզ, վոր Գրիգորը հազում ե և բժիշկների խորհրդով առժամանակ դադարել ե զիմնազիսն հաճախելուց: Իսկ այժմ պիտի տաեմ, վոր նրա դրությունն ել վատացել ե: Սկզբներում նրա հազը թեե բուրովին կտրվեց, բայց յերկու շաբաթից հետո նորից լուս ընկալ և մինչեւ այժմ ել շարունակվում ե՝ որ որի վրա սաստկանալով, այնպես վոր, վոչ գիշերը քուն ունի վոչ ցերեկը հոնգիսու Ռւսումը գոչ գիշերը քուն ունի վոչ ցերեկը հոնգիսու Ռւսումը շարունակելու մասին առաջմ կարել չե մտածել ան-

գամ։ Հորս դրության հետ լիս համարյա հաշտվել եմ,  
բայց ակամ սկսել և մտատանել ինձ Գրիգորի դրու-  
թյունը, և այդ տանջանքը պակաս տանջանք չեւ Յեթե  
տեսնես, թէ վորքան նա փոխվել եւ, և լսես նրա հաղը...»

Յերեկ առավոտյան ժամը տասն և սեկն եր, բայց  
նա դեռ չեր վեր կացի անկողնից Զնայելով, վոր  
ցուրտն ու խոնավոթունը ստիպում են նրան տանից  
դուրս չգնա, բայց առավոտները նա միշտ իր ժամա-  
նակին եր վեր կենում և որվա ընթացքում հաւարյա-  
յերբեք չեր պառկում անկողնում, վորքան ել իրեն  
թուշ զգար, բայց այդ որը ինչպիս ասացի, մինչև այէ  
վախեցած. ներս մտա նրա սենյակը՝ նա պառկած եր  
հաւդիստ՝ լիրել դեպի պառն արած կարծեցի, թե  
քնած ե, այդ պատճառով, վորպեսզի չանհանգտաց-  
բաց նա քնած չեր. նրա աշերքը բաց եին և, ինչ-  
պես յերեսում եր, անձնատուր եր լիդել մտածոթան  
կամաց խոնարհեցի նրա դեմքի վրա. նա տեսավ ինձ,  
բայց մեաց նույն դրության սեղ.

— Գրիգոր, ի՞նչպիս ես, — հարցրի կամաց,

— Լովեմ, քուրիկ, — պատախանեց շատ հանդարտ

ձայնով:

— Բայց ի՞նչո՞ւ մինչեւ հիմա պառկած ես:

— Վեր կացա, բայց շատ ցորս ե, նորից պառկեցի:

Յես մեացի խոնարհված նրա դեմքի վրա. նա այն-  
քան հանդիստ եր, վոր կարծես չեր շնչում։

Գրիգոր, ի՞նչ ես մասձում, — հարցրի յերկար լուս-

թյունից հետո,

Իր հանգիստ հայացքն ինձ դարձրեց:

— ՅԵս:

— Այո:

— Յես վոչինչ չեմ մտածում։

Շուռ յեկավ մեջքի վրա և ուղղակի նայեց աչքե-  
րիս։

— Ինչո՞ւ աչքերդ միշտ այդպես կարմիր են, —  
հարցրեց:

— Աչքերս կարմիր չեն. — վորը ինչ շփոթված,  
բայց վորքան կարելի յեր հանդիսաւ ձաւնով պատաս-

թանցի լիս, վերմակով ծածկեցի նրա բաց կործքը։  
Նրա զեմքը գյոհության արտահայտություն ստա-  
ցավ։

— Ե՞-Ե՞ս, Աննա, դու քեզ ամենեին չես իդում, —  
արտասանեց տիտոր ու մեղմ հանդիմանությամբ, և  
նույն բոպեցին սաստիկ չոր հաղը կարծես պատռեց  
նրա թոքը։ Շուռ յեկավ պատի կողմը, զլուկը քիչ  
բարձրացրեց բարձի վրալից, հաղաց, հաղաց և անկողնի  
տակից հանելով թաշկինակը, թքեց վրան։ Սարսափեցի։  
թաշկինակի վրա արյուն տեսա, վոր առաջ յերբեք  
չելի տեսել։

— Գրիգոր, այդ ի՞նչ ե, — բացականչեցի ակամա։

— Ի՞նչ ե, — հարցրեց հազիվ հանգուացած, բայց  
սաստիկ թուլացած ընկավ բարձի վրա։

— Արյուն ես թքում։

ե՞ս, հիմար բան ե, — պատասխանեց, իբրև թե  
արհամարհանքով, — արժի՞ո ուշազրություն գարձներ

— Վաղո՞ւց ե, վոր արյուն ես թքում։

— Վաղո՞ւց ե,

Անհուն սիրով և միննուն ժամանակ սարսափած,  
թի ձեռքով կամաց զբկեցի նրան. զգում ելի, թէ ի՞նչ-

պես սիրում մարում եւ վոչինչ չկարողացա արտասահներ Նա կտրծես հասկացավ, թե այդ ըովելին ինչ անցավ մտքովս և ինչ եր կատարվում իմ մեջ, Նա շատ տխուր ու մեղմորեն ժպտաց, և ինս կյանքումս չեմ մոռանալ այն հայացքը, վոր նա այդ ժպտի հետ ձգեց իմ զեմքին. բայց նա վոչինչ չարտառանեց, միայն ձեռքը հանեց վերմէկի տակից և կամաց, քնքշորեն ուղղեց ճակատիս վրա թափած մազերը:

— Այսոր հայրիկի մոտ յեղել ես — հարցրեց յեր-

— Յեղել եմ:

— Ի՞նչպես ես:

— Ի՞նչպես առաջ:

— Քեզ դարձլամ չճանաչեց,

— Վոչ:

— Մեղանից վոչ վոքի անունը գոնե չի տալիս,

— Վոչ:

— Մարիկին ի՞լ չի ճանաչում:

— Վոչվոքի:

— Ի՞նչ և խոսում:

— Ճամարյա վոչինչ, միշտ լուսմ եւ:

— Յերիկ չի կարողանում խոսել:

— Յ ըիր:

Յերկուս ել լոեցինք:

— Ի՞նչու յես ինձ այդպես նայում, քույրիկ —

հարցրեց նա, լուսթլունը խղիլով:

Հանկարծ զգացի, վոր արտասուքը խեղում և

ինձ, Արագութիւմք համբուրեցի նրա ճակատը, թողի և ուղղվեցի դեպի դուռը:

— Աննա, — կանչեց յիտեիցս: Կանգ առա, առանց նրա կողմը նայելու: — Մալրիկին վաշինչ չասես: Հասկացա, վոր խոսքը արյան մասին եր:

— Զեմ ասի, — պատասխանեցի վորքան կարող եկի հանգիստ ձայնով, վոր, սակայն չաջողվեց ինձ, և շտապով զուրս գնացի: Յով այդ ժամանակ թե վարքան և լուսպես լաց յեղա, սիրելի քույրիկ, դուա մասին լուսմ ինչպես լաց յեղա, սիրելի քույրիկ, դուա մասին լուսմ եմ: Միանդամից սրտիս մեջ վէրվեց բոլոր, բոլոր հույսս...

Քո Աննա, Մարոյան.

### Բ

Թէֆլիս, 21 գեկտեմբերի 1880

Իմ սիրելի Հոփիսիմեն:

Զեմ հիշում վոր բանաստեղն ե ասում՝ «Թշվառությունը մենակ չի գալիս», և այդ ճիշտ ե, Մեր անկումը վորքան թշվառություններ բերեց իր լեռեկից և, ով գիտե, դիռ ելի վորքան ե բերելու: — Հայրս անդի գիտե, վերապատճեն կ խելագարքեց, Գրիգորի դրությունն գամալույթ լեզավ և խելագարքեց, Գրիգորի դրությունն որ որի վրա սկսեց վատթարանալ, մայրս վոտի վրա հարված ե, իսկ այժմ հերթը ըասել ե մյուս յերկու լեզարայրներին: — մեծին, Արշակին, ահա յերրորդ շաբաթին ե գնում, ինչ հեռացրել են պաշտօնից՝ արքեցու դության համար, իսկ փոքրին՝ Գարեգնին վանդել ուսումնարանից ծուլության համար: Դրանք ել պահեն ուսումնարանից ծուլության համար: Դրանք ել պահեն կաս թշվառություններ չեն մեր ներկա դրության մեջ, մանավանդ առաջինը՝ մեծ լեզրորս անպաշտոն մնալը, վշտովնետե մեր ամբողջ լենտանիքի միակ հույսը նա լեր: Մեր նախկին արատությունից գեռ ելի մի բան լեր: Մեր նախկին արատությունից գեռ ելի մի բան մնացել ե մեզ և մենք դեռ բոլորովին նեղը չենք լեն-

Դեկտեմբեր աւդի ըանն» ել կհատնի և չքափուրությունը (ժվ գիտե, գուցե ծալրահեղ աղքատությունը) ներս մտնի մեր տուն, այն ժամանակ ինչ պիտի անենք, ինչով պիտի ապրենք, ինչով պիտի կերակրը վենք... Այժմից արլունս պաղում ե, զառն, անտանելի դառն մտածմունքներ ճնշումն են նոդիս. յերեակալում եմ, թե մոտիկ ժամանակներում ինչ սոսկալի վիճակ և սպասում մեղ: — Աղքատությունն. . Անզին քուրիկ, արդյոք հասկանում ես, թե ինչ է նշանակում այդ բանը՝ մեղ համար: — Աղքատությունը միշտ յերեակալում եմ վորպես հազար զլիանի մի հրեշ, վորը մեղ իր սառը գրկի մեջ առած, իր սարսափելի ժանիքներով գիռախային անհագ բավականութիւմը կամաց կամաց պիտի քաղի մեր հոգին: Վո՞ն, հազար անդամ ավելի լավ ե, վոր մարդ առաջուց մեռնի, քան մի որ անդամ զգա իրեն ալդ սոսկալի հրեշի գրկի մեջ, ապա թե վոչ մարդս ամբողջապես յերկաթից պիտի լինի կազմված, վոր պիսզի կարողանա տառել որա բարուական և ֆիզիկա կան բոլոր հալածանքները: Դուցե խոսքերս քեզ չափանցություն թվան, սիրելի քուրիկ, գուցե աղքատությունն իսկապես այնքան ել սարսափելի չե, ինչպես յես եմ նկարագրում, բայց յես ուրիշ կերպ չեմ կարող յերկահաւել իսկատի ունեցիր, թե մինչև ալժմ ինչպես եմ մեծացել, կենսական ինչպիսի պայմաններում և ալսուհետեւ ինձ ինչ և սպասում, ինչ պիտի կյանք: Մանկական հասակիցս յես շրջապատված չեմ լիդել դայակներով և ազախիներով. յես յերեք չեմ իմացել թե ինչ է նշանակում չոր կամ սև հաց. կերակուրս միշտ թարմ ե լիդել և ամենահամեղ խորտիկները: Յերբ հագուստիս վրա մի աննշան լուղ ե

կաթել կամ ծայրը փոքր ինչ պատովել, ալիս չիմ հագել այն: Յերբ՝ մազաղիների առաջով անցնելիս, նրանց ցուցանակների վրա դարսուած իրեղեններից մի վորեիցի բան հայտանել եմ, նույն որը դա իմս ե լիդել Յերբ մի վորեի ինձ պես հարուստ որիորդի հազին տեսել եմ մի վորեն նորաձեւ շրջագրեստ, զլիարկ կամ մի ուրիշ բան և հավանել մի քանի որից հետո յս ունեցել եմ այնպիսին: Մի խոսքով՝ յս միշտ ապրել եմ լիության և փափկակեցության մեջ: Բայց հանկարծ այդ բոլորից հետո — ծալրահեղ թշվառություն, ծայրահեղ աղքատություն, սև, չոր հաց — և այն վոչ միշտ — մութ սենյակ, անվերջ աշխատանք, մերկություն, ցուրտ, հիվանդություն, անվերջ զրկանքներ, վիշտ, տառապանք, լաց, վողր, հալածանք, արհամարհանք, սառ կարեկցություն, վիրավորանք, ամոթ, անպատվություն, անզոր բարկություն, անպաշտապանություն, տանջանք, անվերջ տանջանք... Վո՞ն, բառ վական ե յերեակալցելով անդամ կարելի յե խելագարվել...

Ա. Ա.

## Ժ

Քեֆլել Յոփիսիմե,

Ահա և նոր տարին: Յեկավ և յուրաքանչյուրի համար նվեր բերեց այն, ինչ վոր նա առաջ ել ուներ — յերշանիկներին՝ նոր յերշանկություն, ուրախացողներին՝ նոր ուր խություն, ժպտողներին՝ նոր ժպիտներ, իսկ թշվառներին՝ նոր թշվառություն, տանջվողներին՝ նոր տանջանքներ, արտասլողներին՝ նոր արտասլուք...

Յուրաքանչյուրին՝ լուրը: — Աշխարհի սկզբից մինչև  
աժմ բոլոր նոր տարիներն արդպիս յեկել են, այդպիս  
ել կզնան: Անխոնջ ժամանակն իր հավիտենական ըն-  
թացքի ալդ վորոշ շրջանառությունների սկզբնավո-  
րության մեջ միայն հաստատում ե այն, ինչ վոր ցա-  
նել են այն անշեղ, անիմանալի որենքները, վորոնք  
ընդհանուր անունով կոչվում են բաղդի Յեվ զեռ մար-  
դիկ նախապաշտամունքներով են նալում նոր տարու  
վրա. ագահ յերջանիկները նոր վոսկի ժամեր են յե-  
րազում, կարուտ թշվառները — մի քիչ պայծառ բոպե-  
ներ. Յերջանիկներ, գուք ստանում եք ձերը, բայց,  
թշվառներ, ինչու գուք ստանում եք դարձլու աչն,  
ինչ վոր արդին ունեք: — Յուրաքանչյուրին՝ լուրը, —  
հանդիսավոր կերպով պաղպակում ե անտարբեր ճակա-  
տագիրը՝ անհոգ նոր տարու հետ զուզլնթաց սլանա-  
լով աշխարհի մի ծալրից մշուսը:

Մենք ել ստացանք մերը, այսինքն՝ նոր թշվառու-  
թյուն, նոր արտասուք, նոր տանջանքներ... Վո՞, յեթե  
կարողանալի զոսող սրտով և խորին արհամարհանքով  
նայել անամոթ նոր տարու զգիելի ժպիտներին, յեթե  
կարողանայի արգելել նրա մուտքը զիտակցությանս  
մեջ, — յես վիրլորված հպարտությամբ կնայելի նրա  
վրբ յերեսին, անտարբերությամբ կշրջելի նրանից  
գեմք և սիրելով տանջանքներս՝ կփայփալելի նրանց  
սրտիս մեջ և հերոսարար կտանելի նրանց, բայց  
մարդկալին հոգեկան կազմը կամքին յերբեք չի հպա-  
տակում. նա գործում ե այնպիս, ինչպես թելազրում  
են նրան ընության անկախ որևէքները:  
Վո՞, թշվառ մարդ, ինչ մեղք ես գործել...

Յերեկ նոր տարու առաջին որը, առավոտվանից

փակվեցի սենյակումս և վողջ որը մտագիր չելի գուրս  
գալու այնտեղից: Նոր տարին կատաղ լիցան և ատե-  
լության մի այնպիսի զգացմունք եր ներշնչել ինձ,  
վոր յես ալդ որը կատարելապես վոչ վոքի չելի ու զում  
տեսնել. — վո՞ հորս, վո՞ մորս, վո՞ յեղբարձներլս, վո՞  
վոքի: յես ուզում եյի կենարոնանալ միայն իմ մեջ,  
յես ուզում ելի մոռանալ ամենքին և ամեն ինչ... Ի՞նչ  
ե ուզում ինձնից նոր տարին, — ասում ելի ինքս ինձ,  
յերբ յես նրանից վոչինչ չեմ ուզում: — Յեվ, իրավ,  
յեթե հաստատապես գիտենայի — և այդ հնարավոր  
լիներ, — վոր նոր տարին ալդ որը պիտի վերադաշ-  
ներ ինձ վազաթմակիչ վասկի անցյալս, յես կմերժելի և  
ներկա թշվառությանս մեջ ինձ յերջանիկ կհամարելի,  
յեթե այսոր նա անցներ մոտովս և ուշք չդարձներ  
վրաս, իրը թե աշխարհիս յերեսին ալդ որվա հազարա-  
վոր մեռածներից մեկն ել յես եմ: Յեվ կհավատմա-  
արդոք, քույրիկ, այդ ժամանակ յես ինձ բնավթը-  
վառ չելի զգում: Արդուոք ալդ նրանից եր, վոր յես  
չափից զուրս թշվառ ելի, թե նրանից, վոր նոր տա-  
րու զեմ սաստիկ կատաղության զգացմունք եր զար-  
թել իմ մեջ, — չգիտեմ, միայն այս ճշմարիտ ե, վոր  
յես ալդ ժամանակ առաջվա պես չեյի տանջվում: Մի  
տեսակ կաշկանդումն եր տիրել ինձ, յես ինձ վեհանձն,  
ստունասիրտ ելի զգում. կարծես մեկն ինձ սաստիկ  
վիրավորել եր, և յես յերեք չելի կարող նրան նե-  
րել. Յես հպարտանում ելի զրությունովս, և այժմ ել  
զգում եմ, թե ինչպիսի արհամարհանքով ելի նալում  
մինչեւ անգամ ինձ շրջապատող առարկաներին:

Որը շատ տխուր եր. յերկինքը պտտած եր այն  
ժամը, միակերպ մոխրագույն մառախուզով, վոր նա-

յեզի վրա ծուլություն և քուն և բերում։ Զյունը գաղիս եր սաստկո թյամբ։ Նրա փաթիւներն՝ անթիվ համատարած ճանձերի նման ողի մեջ միմյանց խառնվեով, և կարծես գոն իրենց վիճակից, թեթև կերպով թափում ելին գետին։ Քամու թեթև շուշն ընդհանուր հոսանքից յիրեմն շեղում եր մի քանի փաթիլներ և հաղիվ լսելի ձայնով խփում եր լուսումուտիս ապակիներին։ Սենյակում ցուրտ եր. վառարան վառում ենք միայն հորս և Փրիգորի սենյակում։ Շալի մեջ փաթաթվել վ վերցրի Դուռսեսկին և սկսեցի կարդա, թեև կարգալու ամենեին ցանկություն չունեցի։ Յես ուզում ելի մի կերպ սպանել ալդ անտանելի որը և դրա հայար պատրաստ ելի ամեն բան անհի Դուռսեսկին յես իրերեք չեմ սիրել. առաջ մի քանի անգամ փորձել ելի կարդալ և ամեն անգամ ել հանց առաջին իբրևսների վրա ձանձրացե, ու շղրտել ելի մի կողմ, բայց այս անգամ — չզիտեմ ինչու — նա զրավեց իւն։ Թեև սկզբում կարդում ելի մեքենայաբար և կարդացածից համարա վոշինչ չուի հասկանում, բայց հետզինեա մտառությունս լարելով, այսպիսի հետաքրքրությամբ սկսեցի կարգալ, վոր իվերջո բոլորովին անձնատուր յեղա ընթերցանությանս։ Զգիտեմ վորքան ժամանակ եր, վոր կարդում ելի, յիրք սենյակիս դուռ բացվելն ուշադրությունս իր կողմը գրավեց։ Ներս մտավ սալրս և նա նույնն եր, ինչ ես տեսնում ելի նրան ամեն որ. — նույն անզգա քալիվածքը, նույն մեքենայական շարժումները, դեմքի նույն մեռած արտահալտությունը. միայն այս անգամ նրա աչքերն ավելի սեծացած ելին դեմքն ավելի զունատ եր. Ամեն տարբի կալանդի որը միշտ, ինչպես հարկն ե, առաջին

անգամ յես եմ մտել մորս մոտ՝ շնորհափորելու նրա նոր տրին, բայց այս անգամ, յերեխ հասկանալով դրությունս և տեսնել վ, վոր յես յերկար ժամանակ սովորությանս համեմատ շեմ մտնում իր մոտ, նա առաջինն ինքն եր գալիս ինձ մոտ, նրա դիմքին նայելով, իսկույն հասկացա, վոր այդ աչդպիս ե: Նա մոտեցավ ինձ։

— Ծնորհավոր նոր տարի, աղջիկս, — արտասանեց գողդոջուն ձայնով, գրկեց ինձ և համբուրուց ձակատս։

Այդ բովելին հանկարծ չդիտեմ ինձ ինչ պատահեց, միայն քիչ հետո զգացի, վոր ամուր, ամուր սեղմում եմ նրա մեջը ձեռքովս, դեմքս ծածկել եմ նրա կըրծքի մեջ և զառն, անտանելի զառն արտասունքները խեղում են ինձ։ Ո՞ւր չբացավ արդյոք առաջվա սառնասրտությունս, անտարբերությունս, կատաղության և ատեռթյան զգացմունքներս, — ալղպիսի բան ալիս չելի զգում, զգում ելի միայն առաջվա ինձ ծանոթվիշտը, վոր այս անգամ կրկնապատիկ սաստկությամբ եր ձմլում սիրտս։

Մայրս իմ զլուխն առել եր իր ձեռքերի մեջ, և յես զգում ելի, վոր նա նույնպես տրտասվում ե և քնքշորեն համբուրում մազերս Վերջապես զսպեցի ինձ, թողի նրա մեջքը և նայեցի դեմքին։ Նա նույնպես թողեց ինձ։

— Ինչու հանգստացած սիրտս նորից վրդովեցիր, — ասացի ակուա զժկամությամբ. և զգացի, վոր ձայնս այնպես չի հնչում, ինչպես ամեն որ խոսում ելի նրա հետ։

Նա, ըստ յերեսութին, հասկացավ, թե դրանով ինչ ելի ուզում ասել. կամաց, շատ կամաց հառաջեց և,

լերկի ծանր բողեն ավելի չձանրացնելու համար, վոչինչ չպատասխանեց, այլ միայն հարցրեց:

— Ինչո՞ւ լես այս ցուըտ սենլակում նստել. իս կմրսես:

— Յես վճռել եմ այսոր այս սենլակից բոլորովին դուրս չգալ, — ինքս ել չկամանալով, թե ինչ բանի համար՝ բարկացած պատասխանեցի և Դոստուկին նորից ձեռքս առա:

— Յես քեզ ի՞նչ եմ արել, վոր ինձ վրա բարկանում ես, Աննա, — կարճ լոռությունից հետո ասաց մի այնպիսի անմեղ և տխուր լեղանակով, վոր կարծեցի, թե սիրոս հաղար կտոր արեն:

— Իսկ ի՞մ էնդ ինչ եմ արել, վոր ինձ այսպիս տանջում ես, — աղաղակեցի, զիրքը շարտելով հատակի վրա և, դեմքս ծածկելով ձեռքերիս մեջ, սաստիկ ցնցողարար լաց լելա:

— Յերբ վոր աւգուս ե, դուրս կդնամ, — կարծես ներողություն խնդրելով, ասաց և ուղղվեց դեպի դուռը:

— Դու ինձ չես հասկանում, մայրիկ — բայց ականչեցի յես՝ խղճանարկած և անտանելի տանջանքով: — Յես բարկանում եմ վոչ թե քեզ վրա, — դու ինձ ի՞նչ ես արել, իմ խեղճ, իմ քաղցրիկ մայրիկ, — այլ բարկանում եմ... ինձ վրա, միայն ինձ վրա... հիմարությանս վրա, բնավորությանս վրա, մտածմունքներիս վրա, տանջանքներիս վրա...

— Աննա, սբրելիս, — իր մեղմ, տխուր, փաղաքը ձայնով արտասանեց նա, — յեթե քեզ չես խղճում, դոնե ինձ խղճաւ Ներկա զրությունս միթե բավական չե, վոր ուղում ես նոր հոգսեր և տանջանքներ ել

պատճառել ինձ: Տեսնում ես ինչ եմ դառել այս մեքանի ամառա մեջ ..

— Այս չեմ անի, անգին մայրիկ, ներիր ինձ, — բացական չեցի և անհուն սիրով փաթաթվեցի նրա զգովը:

Այդ բողեիին ի՞նչ չեմ անի, ի՞նչ զոհաբերություններ, միայն թե նրան հավատացրած լինելի, վոր նրա լուրաքանչչուր տանջանքն ինձ համար հազարավոր տանջանքներ արժե:

Նա ձեռքով կամաց փաղաքնեց զլուխս և ասաց.

— Աննա ջան, մտածմունքների անձնատուր մի լինիր և խուսափիր ունակությունից: Ինչո՞ւ աւաու փակիլ ես այստեղ և չես ուղում դուրս գալ... Ավելի լավ չի լինի, վոր գնաս Գրիգորի մոտ և խսիս նրա հետ կամ թե, յեթե ուղում ես կարդուլ, կարդաս նրա մոտ, վորակեսզի նա յել զբաղվի. խեղճը պառկած ե մենակի:

— Դու գնա, մայրիկ, լես ել իսկույն գալիս եմ, — շտապով ասացի՝ թողնելով նրան: — Իսկուն գալիս եմ, գնա:

Նա դուրս գնաց:

Անմիջապես լիացի աչքերս և նստեցի, վորպեսզի սիրտս խաղաղի: Զեյթ ուղում, վոր Գրիգորն իմանար, թե հուղվել և լաց եմ յեղել. այդպիտի գեպքում նա ինձ միշտ հանդիմանում եր: Յերբ բավական հանգըստացա, գնացի նրա մոտ: Բոլորովին հագնվուծ՝ նա նստած եր անկողնի վրա՝ և զլուխս ձեռքին հենած, թիկն եր ամի բարձին: բայց իմ մտնելուն պես՝ նրա տեց ուղիղ և խոր նախեց աչքերիս: Ինձ թվաց, վոր իսկուն հասկացավ, թե ինչ եր կատարվում իմ մեջ, և չնացելով, վոր այս անգամ վոչինչ չասաց ինձ, բայց

նրա հայտցքն ել բավական եր, վոր լիս շփոթվելի  
ինչպիս նրա հանդիմանութեռնների ժամանակը Բա-  
րեցի և նստեցի նրա մոտ՝ աթոռի վրա:

— Ենորհափոր նոր տարի, քուրիկ, — առանց բարե-  
փիս պատասխանելու, ասաց նա մի այնպիսի իջա-  
նակով, վորից իսկուն իմացա, վոր դրանով ուզում եր  
ինձ հասկացնել, թե բարեց առաջ այդ պետք եր ասել  
և թե այդ ասելն առաջ ինձ եր պատկանում:

— Ա՞ս, գուրել, — բացականչեցի դառնությամբ. —  
Ինչ եք տեսել այդ անիծյալ նոր տարու մեջ, վոր  
ամենքդ ել շնորհափորում եք ինձ:

— Ենորհափոր նոր տարի, քուրիկ, — կրկնեց Նա  
առաջինից ավելի հաստատ ձայնով և ժպտալով մեկ-  
նեց ինձ իր ձեռքը:

Յես լուռ ավ նրան իմը: Սեղմեց, հետո համբու-  
րեց և նորից թիկն տվեց բարձին:

— Նոր տարին քեզ ինչ ե արել, Աննա, վոր նրան  
այդպիս ատում ես, — կարճ լուռեթունից հետո հարց-  
րեց նո՞ւ անթարթ նաւելով աչքերիս:

Շփոթվեցի, չիմացա ինչ պատասխանեմ, իրավ,  
ինչներ նոր տարին ատում եյի, ինքս ել չգիտեի:

— Վորովհեակ նախապաշարմունք ե, — հանկարծ և  
մեքենայարար պատասխանեցի բերանս յեկածը:

— Ի՞նչը, նոր տարին, թե շնորհալորելը:  
— Ենորհափորելը:

Նա ժպտաց և նրա ոյդ ժպտու, կարծես, ասում  
եր՝ — ինչներ ասում այն, ինչ վոր չես ուզում ասել:

— Միթե նախապաշարմունք չե այն, — նկատեց  
նա, — վոր այժմ բարեկացի ինձ: Ի՞նչ զանազանու-

թյուն կա առորիա բարեկի և նոր տարին շնորհավո-  
րելու մեջ:

Յես վոչինչ չպատասխանեցի և աչքերս վայր թողիտ  
Զգում ելի, վոր այդ միջոցին մի առանձին հայաց-  
քով նա անթարթ նայում և գեմքիս:

— Գիտեմ ինչ կա, Աննա, — վերջապես խոսեց  
Գրիգորը շատ խորհրդավոր ձայնով, վոր յես առաջին  
անդամն ելի լուռ նրանից ինձ հետ ունեցած խոսակ-  
ցության ժամանակ, — առ վերջին ժամանակներս  
նկատում եմ, վոր դու ա իս այն չես, ինչվոր առաջ:

Հետաքրքրությամբ և միհնուն ժամանակ մի տե-  
սակ անրացատրելի լիրկուլով նայեցի նրան և Ի՞նչ ե  
ուզում ասելու ակտում հարցրի ինքս ինձ նա ուզդա-  
կի և շատ լրջորեն, մինչև անդամ խստորեն նայում  
եր աչքերիս:

— Այս, նկատում եմ, վոր դու այլևս այն չես, ինչ  
վոր առաջ, — կրկնեց առաջվա նման, — և ադ պատ-  
ճառով ուզում եմ քեզ հետ այդ բանի մասին խոսել  
լրջորեն: Առաջ դու միշտ ուրախ երի, միշտ անհօգ,  
միշտ ժպտում կամ ծիծաղում երիր, վոչ մի ժամանակ  
չելի տեսել, վոր տխուր լինեիր կամ մի վորեկցիք բանի  
մասին լուրջ մտածե իր, թէկ մեր շուրջը, առորյա-  
կանքի մեջ միշտ յեղել են թեկուզ մեր անձնականու-  
թյանն ուզզակի չիերաբերող այնպիսի լիրեռութներ,  
վորոնց մասին արժեկը և արժե, վոր ամեն մեկը տըխ-  
րեր և լուրջ մտածեր: Մի խոսքով՝ դու առաջ քեզ  
կատարելապես լիրշանիկ եյիր զգում... իսկ այժմ  
միշտ ամուր ես, միշտ լացիս լինում, միշտ մտածում  
միշտ տխոր ես, միշտ լացիս լինում, միշտ մտածում  
միշտ թեթե ժպտիս անդամ այլևս չեմ նկատում գեմ-  
ես. մի թեթե ժպտիս անդամ այլևս չեմ նկատում գեմ-  
ես. վիդ... Այդ բոլորն, իհարկե, ալովկես ել պիտի վնի,

ևուրիշ կերպ չի կարող լինել, վորովհետև դրա համար ունես առիթներ, վորոնք բնականաբար քեզ պնտք ե այդպիս փոխեցին: Յել լիս չեմ ուզում ասել, — և հրմարություն կլիներ, լիթե ասելիքս այդ լիներ միախն, — թե ինչո՞ւ առաջ այսպիս եյլ, իսկ այժմ — այսպիս. վոչ, այլ ուզում եմ ասել և շեշտել, Աննա, վոր այս վերջին ժամանակներս; ինչպես այդ պարզ նկատում եմ, ոռու շատ ես մտածում...

— Ի՞նչ, — մի տեսակ անորոշ լիրկուդով մերինաւաբար հարցը իսու և աչքիրս նորից վարութողի:

— Այն, — պատասխանեց նա լուր «քանչուր» բառն առանձին շեշտելով: — Վորին մարդուս խելքը վոչ հասել ե և վոչ հիանի լիրբեք...

Ամբողջ մարմնովս ցնցվեցի. կարծես մի սարսափելի վոճիր լինելի կտուարած և այդ վոճիրը հայտնի յեղավ: Նա, ինչպես ինձ թվոց, նկատեց այդ, նստեց ուղիղ, թեքվեց գեպի ինձ և կամաց, կարծես զգուշությամբ, առավ ձևոք:

— Անդին քուրիկս՝ արտասանեց նա հանդիսավոր շնչառով, վորի մեջ լսվում եր և սի տեսակ պատասխք, — թող կասկածը բնության արարչության և մարդկալին կյանքը զեկավարող որենքների մասին լիրբեք չմոտենա մանուկ ուղեղիդ: Վոչ մի, կատարելապիս, վոչ մի բավարար լեզրակացության համանելով, նա ծնում ե լոկ հանցանք: Թող անմեղ սրտիդ մեջ հավատը միշտ մաքուր, միշտ հաստատ մաս, վորպես ջինջ լուզը: Հավատը հույս ե, իսկ հոյսը — կյանք: Յել գիտես արդյոք, թե վարդքան չահել ե զու և այդ հասակուա վհրքան անմեղ պետք ե լինի հոգիդ... Աղօթք անմեմ ես, հանկարծ հարցը եց, գլուխն ավելի մոտեցնելով դեմքիս և ձախը բոլորսին ցածրացնելսվէ:

— Վոչ, — ակամա դուրս թռավ բերանիցս: Նա զլուխը տիսուր և հանդիմանորեն շարժեց և կարճ լուսթյունից հետո սկսեց բացատրել ինձ, թե ինչ է աղոթքը և ինչպիսի փրկարար զենք ե նա հոգեկան և բարոյական խաղաղության համար, Յեվ այնպիսի համոզեցուցիչ լիզանակով, այնպիսի հանգիստ պերճախոսությամբ եր նա բացատրում, վոր լիս ագահությամբ լսելով հանդերձ մնացել եյի բուրովին զարմացած, թե ինչպես նրա տակավին յերիտասարդ ուղեղին մատչէլի եյին ալդպիսի վերացական գաղափարները: Բայց նա կարողացավ ինձ համոզել և լիրեկվանից լիս զգում եմ, թե մի ծանր բեռ ընկել ե վրայիցս:

Քռ Աննա Սարովան.

ԺԱ

Թիֆլիս, 10 փետրվարի 1881

Սիրելի Հոլիփսիմե,

Դու ել ես մեղադրում ու հանդիմանում ինձ այն բանի համար, ինչ բանի համար վոր մեղադրում և հանդիմանում եր Գրիգորը: Նրա տսելով, լիս «շատ եմ մտածում»: Սական դու նրանից ավելի խիստ ես զատաքնում իմ ալդ վարժունքը: ասելով, թե լիս ուղղակի օտիքիստություն եմ անում, վոտնակոխ եմ անում ամբողջ մարդկության ամենասրբազն, ան մերձենալի հավատալիքը և ալդտեղ բերում ես Գյոթելի նշանավոր իսոսքերը, թե՛ մտածող մարդու ամենամեծ յերշանկությունն այն ե, վոր քննելին քննած անմեղ պետք ե լինի հոգիդ: Յեւնենա, իսկ անքննելին խաղաղ հոգով պաշտեւ: Յեւնենա, իսկ անքննելին խաղաղ հոգով պաշտեւ: Յեւնենա, իսկ կլիներ զրությունս, լիթի ապրեակալում եմ, թե ինչ կլիներ զրությունս, լիթի ապ-

բեկու լ'նելի միջին դարերում. անըուշտ Հուսի նման ինձ ել խորուկ կը արձրացնելին. Վավ վցի, սիրելի քուլրի. Հո ն ուղտ մի շինեք. Միթե զլիումս խելք ե մացել. վոր արարքներիս համար ինքս ինձ հաշիվ տամ. Ինչնել չես մտնում գրութիւնս և ապա թե զատաքննում արարքներս Ամբողջ բարոյական աշխարհս ճակատագրից ծանր հարված ե ստացել. նա վիրավորված և կատաղած ե. վորպիս մի անզոր գաղան, վորին խաղաղ դրուժան ժամանակ սաստիկ անհանգստացրել են. Հիասթափութունս մեծ ե. յես գեմ առ դեմ կանգնած եմ զառն իրականության առաջ, վորի մասին կլանրիս մեջ լերբեք զաղափար անզամ չեմ ունեցել Շատ վատ խաղ ե խաղացել ինձ հետ ճակատագիրը. հանկարծակի և անպատճառատ, նա շպրտել ե ինձ այդ դառն, այդ սոսկալի իրականության առաջ և առուծ ե՝ հաստատուն մնա. — Ա'յս, թշվառականս ինչ եմ ստացել, վոր ինչ տամ..

Մեր վիճակը որ որի վրա վասթարանում եւ Մի լիրու խոսքով նկարագրեմ մեղ մեր կենցաղավորութունը, մեր ապրուսոր, և գու այն բան հասկանաւ Յեթի աւժմ մանես մեր տունը, շրջին մեր սենյակները և քեզ տահն, թե այսուղ Արքուաններն են ապրում, վոչ աչքերի կողիս հավատալ, վոչ ականջներիդ. աւն ըրուրը, ինչ վոր կտեսնես, շատ ծիծաղելի — չեմ ասում դառն — կատակ կթվա քեզ. — Տան մոալ ինուս թլունն և անհարմարությունները մի կողմը թողնելով (այդ մասին կարծեմ, գրի եմ քեզ), մեր սենյակի նախկին շոալլ ֆառավոր զարդարանքների և կահավորման հետքն անգամ չես կարող գտնել ալժմ. դաշնամուրից, իմ սիրելի գաշնամուրիցս սկսած մինչև վեր

ջին բաղկաթոոը, մինչ լուսամուտի վերջին վարագուցը. — բոլորը վաճառեցին աճուրդով. Խոհարարի, աղոյիս նի և ծառաների մասին, իշարկե, ափելորդ ե անդամ խոսել. չունենք զոնե մի հատիկ ծառա, վորին փողոց ուղարկենք. Ամեն բանի մեջ — ուտեւում, խմելում, հագուստի խնայողություն ենք անում, անում նելում — սաստիկ խնայողություն ենք անում, անում ենք ճարահատյալ. Ել չեմ գրում, թե այդ բոլորը վորենք ճարահատյալ... Տանը գտնված ավելորդ վոսւեղինը լերեվակալի... Տանը գտնված ավելորդ վոսւեղինը և արծաթեղինը սկսել ենք վաճառել. Առավելապես մեղ և արծաթեղինը լերեվակալի վարձն ու գեղորակիքը. Գոնեքանողում են բժիշկների վարձն ու գեղորակիքը. Գոնեքանողուց մի զգալի ոգուտ լիներ հորս կամ լեղորդ: Ահա ամբողջ չորս ամիս ե, վոր այդ բժիշկները ջանաւիրությամբ հաճախում են մեր տուն և, չնայիլով այսուղ ամիսը հաճախում են մեր տուն և, չնայիլով այսուղ ամիսը հաճախում ել համարյա հույնն ե, դրան, հորս դրությունն այժմ ել համարյա հույնն ե, ինչ վոր առաջ, իսկ Գրիգորի առողջությունն, ընդհակառակին, որ որի վրա լետ ու լիտ ե գնում.

Հա, բժիշկներ ասացի, միտս լեկավի, Անցրալ անգամները (այդ մասին, կարծեա քեզ չեմ զրել) հորս գամները — (գու պետք ե վոր ճանանշում լինես այդ բժիշկը — (գու պետք ե վոր ճանանշում լինես այդ պահում ե մեղ և ասում ե ծածուկ, թե պահումին) դառնում ե մեղ և ասում ե ծածուկ, թե հորս այլիս վոչինչ չի ոգնիլ և կիզուր համ նա յե չարշարվում (ասա խեղճն ինչ ե չարշարվում), համ մենք. չարվում (ասա խեղճն ինչ ե չարշարվում), համ մենք. Յնիթե ուզում եք, ասում ե, այնպիսի գեղ կտամ, վոր գերջնականապես կվորոշի նրա վիճակը. Հասկանում վերջնականապես կվորոշի նրա վիճակը, թե դրանով ինչ եր ուզում ասել ես, սիրելի քուրիկ, թե դրանով ինչ եր ուզում ասել ես — ձեր հոր կտանքն իմ ձեռքին ե. ուզո՞ւմ եք, յես նրան կտանեմ... Զարմանքից, սարսափից և կատաղությունից չգիտելի ինչ պատասխանեմ. Սառնասրությունից չգիտելի ինչ պատասխանեմ. Սառնասրությունից չգիտելի ինչ պատասխանեմ. Կատարելապես կորցնելով, պատրաստ եի մի

ապօտակ տալ նրա զեր յերիսին և կտալի, յեթե նա,  
կաւելով, թե բանն ինչումն ե, իսկույն չհեռանար:  
Յես աղաղակեցի նրա յետելց, վոր նրա վոտը ալես  
չինի մեր տանը, Յերբ նա գնաց, իս լաց յեղա,  
վորովհետեւ վորդիական ամենասուրբ, ամենաքնքուշ  
դդացմունքներս անսասիլի կերպով վիրավորված էին,  
Հարազատ հոր աննպատակ սպանման դործի մեջ ուշ  
զում ելին, վոր հարազատ աղջիկը խոհրդակից և  
մասնակից լիներ... Այս մասին մտածելիս անդամ  
մազերս փշաքաղում են և ամեն անդամ սոսկում եմ,  
վորպես մի դարձուրելի վոճրագործ... Տիր աստված,  
միթե բժիշկներն ալլագես հեշտ կարող են խաղալ  
իրենց հիվանդների կյանքի հետ, միթե առանց դար-  
հուրանքի նրանք կարող են նույնիսկ մտածել այդպի-  
սի բաներ... Նրանք, վորոնց ուղղակի կոչումն և հո-  
ժարակամ պարտականությունն ե հիվանդներին կյանք  
տալ ընդհակառակն ուզում են ունեցած կյանքն ել  
խլեր և ալդ ինչու — վորովհետեւ իրենց դործից վոշինչ  
չեն հասկանում և, խոստովանելով ալդ բանը, չեն ու-  
զում հրաժարվել բժշկելուց, վորպիզի չխայտառակվեն  
իրենք... Ավալակ մարդասպաններն ավելի խեղճ ունեն  
թերեւ:

Մյուս յերկու յեղբայրներս — Արշակն ու Գարեգի-  
նը — բավական չե, վոր անզործ են, ալլ և մի ծանր  
բեռ են դարձել մեր վզին: Յերկուան ել ամբողջ որն  
ընկած են տանը և ձրի ուստում են, խմում: Արշակին  
ալլս վոչ մի տեղ չեն պահում իր արքեցողության  
համար, իսկ Գարեգ նա ինքը չի ուղում վոչ մի  
տեղ կանգնել: Զնալելով մեր հորդորանքներին, թա-  
խանձանքներին և հանդիմանություններին, վոչ Արշակն

և ուզում ձեռք վերցնել իր արքեցողություններից, վոչ  
Գարեգինն - իր ծուլությունից: Այս համը, և ոյր, վորքան  
տառապանքներ բերիր մեր գլխին..., Նրա առողջության  
ժամանակ ամենքս սիրում ելինը նրան և վախենում  
նրանից, Թողնելով իր զվարճախոսություններն ու կա-  
տակները, հարկավոր գեպքում գիտեր լուրջ խոսել լուրջ  
խրատել: Մենք աշխատում ելինք այնպիսի անզուրեկան  
բան չանել, վորի համարնա հանդիմաններ մեզ, իսկ այդ-  
պիսի գեպքում նրա հանդիմանությունները շատ իիստ  
ելին լինում, Կարսղ ելինք Գրիգորը, իս կամ Գարե-  
գինը զեթ մի որ առանց մի վորեվիցե հարգելի պատ-  
ճառի ուսումնաբանից յետ ընկնիլ, Կարսղ ել Արշակը՝  
նրա հետ միասին ճաշի նստած ժամանակ՝ մի բաժակ  
ավելի խմել իսկ ա՞յժմ: Այլու չկա հայր: Հավիտան  
լսեցին նրա հանդիմանությունները, նրա խրատները,  
այս, հավիտան, վորովհետեւ այս, ինչ վոր կար, ել չի  
լինելու. անցյալն ել չի դառնալու: Վայ նրան, ով  
աեր չունի:

Յերկու յեղբայրներիս անզործ մնալը՝ մեր այս  
թշվառության ժամանակ՝ սաստիկ մտատանջություն  
և պատճառում մանավանդ Գրիգորին եկի վոչ սի  
հանդիմանություն, վոչ մի նախատինք չի մնում, վոր  
չթափի նրանց գլխին, բայց նրանք ուշագրություն  
չեն դարձում վոչ նրա, վոչ ինձ ու մորս վրա, յերբ  
մենք նույնպես սկսում ենք հանդիմանել, հորդորել  
խնդրել, վոր նրանք թողնեն իրենց պակասություն-  
ները և մի գործի կանգնեն:

Յերեկ մատա Գրիգորի սենյակը, Նա այնտեղ չեր,  
բայց հարեան սենյակից լսեցի նրա ձաշնը, խոսում եր  
Արշակի և Գարեգնի հետ:

— ... Միթե գոնե ամոթ, պատկառանք չունեք, —  
ասում եր նաև — Ախր մինչեւ յի՞րը պիտի ալդպես  
ման գաք... Տեսնում եք, ելի, թե հետզհետե մեր վի-  
ճակն ինչ և դառնում. որ կդա, վոր դուք այստեղ չոր  
հացի կտոր չեք գտնիլ. վոր ուտեք, Գոնե ձեզ համար,  
ձեր փորի համար աշխատեցեք... Յել ի՞նչ հուսով եք  
ալդպես անում.

— Մի վախի, աշխարհիս լերեսին վոչ վոք քաղցած  
չի մեռնի, լսեցի մեծ յեղբորս ձայնը, վորին հետեւց  
յիրկար հորանջում:

— Յեվ վոչ առանց ամոթի, — նկատեց Գրիգորը:  
Եկվ դու ընդունակ կլինես ծանոթներիդ, բարեկամ —  
ներիդ, թեկուղ հենց բոլորովին անծանոթ մարդկանց  
պարզել ձեռքդ՝ վոզորմություն խնդրելու... Համ:

— Դեհ շատ պիտք ե զահնա տանես, ։ բարկացած  
գոռաց Արշակը, մեթե սիրտ շատ ե այրվում ծնողնե-  
րիդ և քրոջդ համար, կարող ես ինքդ աշխատել:

Դեռ կարճ ժամանակ լուսթյուն տիրեց, հետո լովեց  
Գրիգորի չոր հազրի:

— Դու այնքան չես մտածում, վոր լիթե լիս — չեմ  
ասում քեզ պիս, փոքր ինչ առողջ լինելի, բանը լեր-  
բեք այստեղ չելի հացնի, վոր իմ այդ պ որտականու-  
թյունը դու ի՞չ հիշեցնելիր, — հանգարտ ձայնով  
պատասխանեց նա, լերը հազը կարեցի — Բայց դը-  
բախտաբար, այն, դժբախտաբար, լիս ստիպված եմ  
լսելու քեզնից ալդպիսի խոռքեր, վորքան ել այդ ծանը  
վինի ինձ համար:

— Թող քուրդ աշխատի...

— Յեվ դու ուտես, — աղաղակեց Գրիգորը մի այն-  
պիսի յեղանակով, վորից յերկում եր, վոր նա յերբեք

չեր սպասում, թե Արշակից մի ալդպիսի բան կարող  
ե լսել:

Կարճ լուսթյունից հետո լսեցի, թե ինչպես նա  
սաստիկ զալրացած, մոտեցավ դռան շեմքին: Նա ներս  
մտավ և դուռը ամուր շրբմկացնելով, փակեց լետեցի,  
Յես արձանացած կանգնած ելի սենյակի մեջ տեղ և  
չգիտելի ինչ եր կատարվում իմ մեջ. այսքանը միայն  
գիտեյի, վոր մեծ յեղբորս արտասանած վերջին խոռ-  
քերը, «Թող քուրդ աշխատի» — ինձ սաստիկ աղդել  
ելին...

— Աննամ, — զարմացած և փոքր ինչ վախեցած ար-  
տասանեց նա, հանկարծ տեսնելով ինձ:

Յերկում եր, վոր չեր սպասում, թե լես այնտեղ  
կլինելի: Յես չկարողացա ձայն հանել և վոչ ել շարժ-  
վել տեղիցս:

Նա կամաց մոտեցավ ինձ, կամաց առավ ձեռքերս  
և, սաստիկ կարեկցությամբ նայելով աչքերիս, արտա-  
սանեց գողդոջուն ձայնով:

— Սիրելի քուլրիկս, տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես,  
վորքան անգութ են նրանք...

— Ի՞նչ, լես կաշխատեմ, — սառնությամբ պա-  
տամիսանեցի լես: Նրա դեմքի վրա լերեաց սաստիկ  
տանջանք:

— Աննա, սիրելիս, շշնջաց նա, և նրա ձայնը,  
կարծես հանգավ: Նրա աչքերը լցվեցին արտասուզի  
փայլուն կաթիլներով. նա խոնարհեց և սկսեց համ-  
բուրել ձեռքերս: Յես համարյա վոչինչ չեյի զգում և  
շարունակ կանգնած ելի նույն դրության մեջ:

Հանկարծ թողեց ձեռքս և գնաց դեպի իր մահճա-  
կալը:

— Ա՞խ, ինչո՞ւ լես հիվանդ եմ, — աղաղակեց և ընկնելով անկողնի վրա, դեմքը թագցրեց բարձի մեջ։

Այն աստիճան աղեկառում եր նրա ձայնը, վոր ցնցվեցի, և սիրտս կարծես սաստիկ, սաստիկ ճմիեցին։ Շտապեցի դեպի նաև նա ցնցողաբար հեկեկում եր և ցնցվելուց նրա ամբողջ մարմինը վեր ու վեր եր թռչում։ Առաջին անգամն եր, վոր տեսնում ելի նրան այդպես հուսահատված և լաց լինելիս, իսկ առաջ նրա դեմքի վրա յերբեք չելի տեսել հուսահատության վոչ մի գիծ, աչքերի մեջ արտասուքի վոչ մի կաթիլ։ Նա միշտ խրախուսում եր մեզ, հանդիմանում, յերբ տեսնում եր, վոր մենք այնպես շուտ ընկնում ենք հոգով, և ամեն անգամ կարողանում եր մեզ վրա ներգործություն ունենալ իսկ մյժմ, մյժմ։

Նրա աղաղակն ու հեկեկանքն ամեն բանից ել լավ եր բացատրում, թե վորքան փշրված եր նրա ուժեղ կամքն արտաքին ծանր, հանգամանքներից... «Ախ, ինչո՞ւ յես հիվանդ, եմ», — աղաղակում եր նա այն ժամանակ, յերբ լես նրան ասում եմ, թե պատրաստ եմ աշխատելու։ Այդ խոսքերը յերբեք չեմ մոռանալ։ Դրանք արտասանված ելին այնպիսի տանջանքով և այնպիսի անկեղծ սրտով, վորից յերկում եր, թե վորքան անկեղծ և անհուն եր նրա յեղբայրական սերը դեպի ինձ...»

Ամեն կերպ աշխատեցի հանգստացնել նրան, բայց նա այն աստիճան հուզվել եր, վոր ալիս չկարողացավ խոսել ինձ հետ։ Ավելի լավ համարեցի նրան մենակ թողել և դուրս յեկա շատ ծանր տրամադրությամբ։ Ծթող քուրդ աշխատիւ խոսքերը բնավ մտքից չելին հեռանում... Բայց ամենից ավելի ինձ մտատանջում

եր այն հանգամանքը, վոր Գրիգորի հուզմունքն անվաս չեր կարող անցնել նրա առողջության համար։ Յեվ, դժբախտաբար, այդպես ել լեղավ։ — այսոր նրա դրությունը շատ վատ ե,

Դեպի քեզ ունեցած սաստիկ կարուս ե, սիրելի Հոփիսիմե, վոր այսքան յերկար նամակներ եմ գրում քեզ։ — ալդ միենույն ե, թե խոսում եմ քեզ հետ։ Սիրսս սաստիկ լցված ե։ Վշտերս ուղղում եմ բաժանել մեկի հետ և բացի քեզնից ել ով ունեմ... Ախ, յեթե ալժմ մոտս լինելիք, միակ կարեկիցս, ինչպես ջերմագին կսեղմելի քեզ վշտահար կըծքիս...»

Քո Աննա Սարոյան.

### ԺԲ

Անգին քույրիկ,

Ցեղայրս — Գրիգորը մեռավ... Արտասուքը խեղդում ե ինձ, ել ուժ չունեմ գրելու...»

### ԺԴ

Թէֆլիս, 30 ապրիլ 1881

Ստացա անկեղծ ցավակցությանդ նամակը։ Անչափ շնորհակալ եմ և՝ խրախուսանքիդ համար։ Առավել քան այժմ յես կարու եմ ալզպիսի խրախուսանքների, վորովհետեւ զգում եմ, թե ինչպես վերջին հարվածը չիմն ի վեր տապալել և ամրողջ բարոյական աշխարհու։ Ենս ընկած եմ, վորպես մի մարդ, վոր անթիվ ծանր վերքեր ստանալուց հետո՝ ոտանում ե և վերջին ամենասարսափելի վերքն ուղիղ կըծքին։ Սակայն յես չեմ տրանջում։ Փառք և գոհություն նրան, ով անորինում

Եմարդկային բաղդը, Յերբ տեսնում ես, լերբ զգում ես, վոր տկար են ուժերդ, պետք ե հպատակվես տիրապետող բարձր, անիմանալի որենքներին, վորոնց սահմանել ե ինքը նախախնամողը, Յեվ լես հպատակվում եմ. Մինչև այժմ հուսահատ պատերազմ ելի մղում, Մոլորության անդունդն արդեն բաց եր արել իմ առաջիր ահարկու բերանը, և քիչ եր մնում, վոր կուրորեն ընկնելի նրա մեջ. Բայց ինչ շահեցի դրանից. — այն, վոր տանջանքներս կրկնապատկվեցին, այն, վոր մեղք գործեցի և ի վերջո ընկա հաղթված. Այս, յես այժմ ընկած եմ. հպարտ գլուխս այլիս չի հանդպնում վերև նակել. նա խոնարհված ե և միշտ խոնարհ կմնա, Թող ալսուհետև ինչ կուզել լինի, — յես հաշտվել եմ ամեն բանի հետ: Յեվ դու չես կարող լերեակալել, սիրելի Հոփիսիմե, թե վորքան հանդիսատ եմ այժմ: Յեթե կուրծքս ճղեն և հանսն սիրոս, Նրան սառած կդտնեն, կարծես յես ալիս չեմ ապրում: Յեվ այդ պատճառով, առանց գեթ մրիփոքը հուզվելու, այժմ համարձակ կարող եմ նկարազբել քեզ յեղբորս վերջին ժամերն ու մահն իրենց բոլոր մանրամասնություններով: Յեվ պետք ե նկարազբեմ: Թող քո աչքերից ել փոքը ինչ արտասուր թափվի. — նա արժանի յե դրան:

Նա մեռավ սրանից ուղիղ յերկու շարաթ առաջ, նույն ամսի 16-ին, լերեկոյան մոտ 5. ժամին: Այդ նշանավոր որը շատ լավ հիշում եմ: Գարունն ալսուեղ շատ վաղ յեկած լինելով, յեղանակը հիանալի լեր և ալնքան տաք, վոր մինչև անգամ լուսամուտները բաց ելինք արել. Մեր տեղափոխվելուց հետո, առաջին անգամն եր, վոր մենք այս տանը պարզ ող եյինք ծծում: Գրիգորը պառկած եր

առաջ նա խնդրել եր, վոր մահճակալն այնտեղ տեղափոխենք: Վերջին անգամ ուզում եր տեսնել գարնան պայծառ արկը, նայել կապույտ յերկնքին և տեսնել թի ինչպես ուրախ ծիծոնակները գալիս, նստում են բակում կապած թոկի վրա, որորվելով ճշվում և նորից թուշում, գնում, Այդ հինգերորդ որն եր, վոր այլևս չեր կարողանում վեր կենալ անկողնից: Մինչք բոլորովին չելինք կարծում, թե այդ որը կմեռներ, վորովհետև մեռնելուց մի քանի ժամ առաջ նրա գրությունը նույն եր, ինչ վոր մի քանի որ առաջ, մինչև անդամ լավ եր բայց յերեկ ինքն այդ իմանում եր, վորովհետև նույն որն առավոտյան հատուկ խնդրեց ինձ, վոր հեռանամ մոտից: Այդ որը սովորականից ավելի քննքուշ եր թե դեպի ինձ, թե դեպի մայրս, վորի մի վոտը հորս սենյակումն եր, մյուսը նրա մոտ: Այդ որը սովորականից լշատ ել եր խոսում ինձ հետ, իսկ լերեմն մերթ ուրախ եր լինում, մերթ հանկարծ տրխուրում և մտածության մեջ ընկնում: Մի անգամ ել ուրախ խոսելուց հետո, հանկարծ լոեց, գլուխը դարձրեց դեպի լուսամուտը և դուրս նայելով, ընկդմվեց մտածմունքների մեջ: Չուզեցի խանգարել նրան, և փոքր ինչ կանալով դեպի նա, սկսեցի նայել դիմքին: Աստված իմ, վորքան փոխված եր այդ դեմքը, իմ ձանաշած սիրուն կանացի դեմքը. — նիհար, չոր, գունատ, կարծես մի կաթիլ արյուն անգամ չկար նրա յերակների մեջ: Փոքրիկ, կանոնավոր քիթը, վոր միշտ ներդաշնակ գեղեցկություն եր տվել նրա դեմքին, կարծես սաստիկ մեծացած՝ դուրս եր ցցվել սկսմբած պնչերով: Աչքերը խոր եյին ընկել և մեծացել, իսկ պարզ, լայն ճակատը կարծես ավելի լայնացել եր,

Զգիտեմ ինչ եր պատճառը, բայց ինձ թվում եր, թե առաջին անդամն եմ տեսնում նրան այդքան փոխված: Յերկար ժամանակ նա անշարժ կար նույն դրության մեջ: Մի ինչ վոր անորոշ զգացմունք, կարծես, չեր թողնում ինձ, վոր խանգարեմ նրա մտածմունքները: իսկ ինձ թվում եր, թե այդ մտածմունքները թանգ արժեն նրա համար: Լուս և խորին վշտով նայում եյի նրա դիմքին, լերը հանկարծ նրա շրթունքները բացվեցին և նա կամաց, շատ կամաց, կարծես ինքն իրեն շնչաց:

— Ի՞նչ սիրուն բան և դարունը... Ակամա սիրում ես կյանքը, ինչքան ել վոր իմ լիներ ձախորդություն ներով... ակամա ուզում ես ապրել, սիրել և...

Լուս և դեմքը կամաց դեպի ինձ դարձեց:

Ուղիղ ասա, քույրիկ, — առաջվա նման դարձամ մտածում ես...

Վոչ, Գրիգոր, իս աղոթում եմ, — պատասխանեցի ջերմեանդ զգացմունքով:

Տեսա, թե ինչպես նրա դեմքը պալծառացավ: Նա առավ ձեռքս և սեղմեց:

— Աղջիկը, սիրելի քույրիկ, — պատասխանեց, կարծես, ուժ ստացած: — Ազոթիր, միան աղոթքը կարող ե փրկել քեզ կյանքիդ ծանր բռակեներում... Հավատա ինձ, վոր լերեք չես զզջա, լիթե չմոռանաս իմ այս անկեղծ խորհուրդը: Ճշմարիտ ե, թեև կյանքի ձախորդությունները լերեկմն շատ մոլորությունների պատճառ են դառնում, բայց մարդս այլպիսի դեպքերում միշտ աչքի առաջ պիտի ունենա, թե ով և ինչ ե ինքը, լերեք չպիտի մեռցնե իր մեջ հավատը, հուսը, լերեք չի պիտի մոռանա աղոթել, կարծելով թե այդ-

պիսով ինքը վրեժինդիր ե լինում. — այդ չափից դուրս անմտություն կլինի մարդու կողմից... Հավատա ինձ, վոր ձախորդություններն ու թշվասությունն ել ունեն հոգեկան իրենց վահմ քաղցրությունը, ինչպես առողջությունն ու լերջանկությունը, միայն թե մարդ չկորցներ հավատը, հուսը, բնակ չմոռանար աղոթել... Այդ սովորեցրել ե ինձ ինքը կյանքը, և դու առանց կասկածելու հավատա ինձ:

Ցես լսում ելի նրան խորին լերկյուղածությամբ, լսում ելի վոչ թե իրեկ քսան տարեկան անփորձ յերիտասարդի, այլ վորպես մի պատկառելի, փորձության բովից անցած ծերունու, մի յերկնառաք մարգարելի, վոր տարածում և աստծո խոսքը... Բայց հանկարծ նրան լսելու՝ մի ինչ վոր անորոշ լերկյուղ պաշարեց ինձ: «Այս ինչպես ե խոսում սա այսոր» — այդ հարցն ակամա ծագեց զլիսումս: Իսկ նա խոսում եր մի ուրիշ տեսակ, վոչ այնպես, ինչպես ամեն անդամ խոսում եր այլպիսի բաների մասին, նրա ձայնը հնչում եր տիուր, բայց մի ինչ վոր վեճ, սրբազն վոգերությամբ: Նա նայում ել եր ուրիշ տեսակ: Նրա հայացքը վառվում եր, դրանով, կարծես ուզում եր ուլժ տալ իր խոսքերի աղդեցությանը...

— Գրիգոր, ինչո՞ւ այսոր այսպիս ես խոսում, — Հկարողանալով դիմանալ, հարցը կարծ լսությունից հետո,

— Ի՞նչո՞ւ, — արտասանեց քնքշորեն, նայեց աչքերիս և մի տեսակ ոտարութիւն կերպով ժպատց: — Վորովհետեւ պիտի մեռնեմ, — ալիբացը հանդարտ ձայնով, բայց վերջին բառն արտասանեց այնքան կամաց, վոր հազիվ լսեցի:

Հգիտեմ ալդ ըռպեյին ինչ պատահեց ինձ, միայն ամուր զրկեցի նրան, կարծեցի, թե նույն ըռպեյին հավիտյան պիտի անհետանար աշքիս առաջից:

— Դրիգնր, ինորկե, կատակ ես անում, — շնչացի, ինքո իմ ձախնից վախենալով:

Դարձալ նայեց աչքերիս և տեսա, թե ինչպես ժպիտը հանկարծ անհետացավ նրա դեմքից և այդ դեմքն ընդունեց տխուր, վշտալից արտահայտություն։ Նա վոյնչ չպատասխանեց, միայն յերկար նայեց աչքերիս և դեմքը բրջեց դեպի լուսամուտը։ Այժմ նայում եմ ինք նրան համարյա սարսափով։ համ ուղում եյի փախչե, նրանից, համ գրկից բաց չթողնել...

Զգիտեմ վորքան ժամանակ ալդպես անցավ, իբր նա, շարունակ դուրս նայելով, առաջլա նման, բայց այս անգամ շատ տխուր ձախնով շնչաց։

— Հիշում ես, քուրիկ, — այն ժամանակ մենք դեռ շատ փոքր եինք. յես տաս տարեկան ելի, դու՝ յոթ, — գնացել եյինք տետրակիներ առնելու և իտ եյինք դալիս։ Ճանապարհին մեզ մի կատաղած յեղ պատահեց։ Ամենքը յերկուզից մի կողմն եյին փախչում և թափնվում առաջին պատահած տեղը։ Մենք շատ վատ տեղովն եյինք անցնում. այնտեղ վոչ խանութ կար, վոչ բակ, վորտեղ մենք ել կարող լինել ինք թափնվել։ Ճարահալու կանգնեցինք այնտեղ դանդած մի տան պատի տակ։ Յեզր մոտենում երի Գունաթափ և սաստիկ յերկուզով դու սեղմքեցիր ինձ. յես կանգնեցի առաջդ, վորպեսզի յեղանը դիմադրեմ և պաշտպանեմ քեզ նրա հարվածից։ Արյուն կտրած աչքերով՝ լիզն ուղղակի ինձ վրա յեկավ և կանգնեց մեր առաջ։ Յես սարսափից վոչ կարողացա աղաղակելլ վոչ շարժիկ միայն բնազմամբ մի կողմ սեղմքեցի

և յետեիցս յերկու ձեռքով ամուր բռնեցի քեզ, Յեզր կանգնեց, կանգնեց, նայեց, նայեց սեզ, հանկարծ փռնչացրեց, շուռ յեկավ և, պոչը տատանելով, վազեց միթնույն ուղղթյամբ։ Մենք ազատվեցինք։ Յես նայեցի դեմքի՝ և կարծես, այժմ ել տեսնում եմ այդ դեմքը. սաստիկ գունաթափ. սարսափից չուծ, անմիտ աչքերով, դու ամբողջ մարմնով դողում ելիր՝ առանց թողնելու ինձ՝ շարունակ նայում ելիր յեզան յետեիցս, կարծես նա դարձալ շուռ պիտի զար մեր կողմը և առաջգա նման պիտի մոտենար մեզ այս անդամ հաւրու տալու դիտավորությամբ։ Բայց յեզը շուռ յեկավ մի ուրիշ փողոց և չքացավ մեր աչքերից։ Տեսա, թե ինչպիս դու ազատ շունչ քաշեցիր, լուռ նայեցիր ինձ, մի տեսակ ոտարոտի, բայց շատ անշնորք կերպով ժպտացիր, կամ ավելի ճիշտ և ասել՝ ծամածոնեցիր դեմքը և հանկարծ լաց յեղար, թեկ, ինարկե, յես չփրկեցի քեզ յեզան հարվածից, բայց այդ րոպեյին պատրաստ ելի զոհ գնալու յեղանը, միայն թե քեզ ազատած լինելի, չնայելով, վոր սարսափին ինձ ել եր կաշկանդել։ Այնուհետև ինչպիսի հպարտությամբ և հրճվանքով հիշում ելի այդ անցքը. մտքումս միանգամից տպավորվել եր, վոր քեզ ազատողն յես ելի... Նա լուց և մնաց անշարժ, անթարթ դեպի դուրս նայելով. Յերեկում եր, վոր մանկական այդ հիշողությունն ալդ րոպելին ել քաղցր եր նրա համար, և նա չեր ուղում հեռացնել այդ հիշողությունն իր գլխից։ Յես ել չելի համարձակվում խանգարել նրա այդ քաղցր հիշողությունը, իրավ, ինչ սքանչելի ժամանակներ ելին ալդ...

Մանկության որեր, յերազի նման  
Անցաք, գնացիք, այլ չեք գաղնալու...  
Անջաց նա, կամաց հոգոց հանեց և նայեց ինձ,

Դրիգնը, — ինչու հիշեցրիք ինձ այդ անցքը, — արցրի:

— Ինչո՞ւ, — արտասանեց նա հուսահատ ձայնով. — Նրա համար, վոր յես այժմ ալլևս վոչ մի բանից զիմ կարող քեզ ապատել...

Զգացի, թե ինչպես սիրտս սաստիկ ցավ տալով թրթուց, գլուխս կամաց խոնարհվեց նրա կրծքի վրա, և հուսահատության հեկեկանքը սկսեց խեղդել ինձ. Այդ ըստեկին արգեն աներկբալ զգում ելի, թե ինչպես մի աներկույթ զորություն սկսում եր կամաց կամաց բաժանել նրան ինձնից հավիտան...

Ճաշին, բացի կես բաժակ կաթից, վոչինչ չառավ բերանը. Նկատում եմի, թե ինչպես կամաց-կամաց թուլանում եր նա, բայց ուշքը մինչեւ վերջին շունչը վրան եր: Մեռնելոց մի ժամ առաջ ուղեց տեսնել հորը, Մայրս, վոր, ըստ յերկութին, արդեն սկսել եր հասկանալ, թե բանն ինչումն ե, կատարեց նրա խընդիրը. Շուտով հորս՝ թեից բռնած՝ զգուշությամբ ներս բերեց և զգուշությամբ նստեցրեց հիվանդի մահճակալի առաջ՝ աթոռի վրա: Հայր և վորդի նայեցին միմյանց. հորս հալացքը նույն անմիտ, նույն անզգա հայացքն եր, սակայն այս անգամ այդ հայացքի մեջ նկատվում եր վորը ինչ հետաքրքրություն, իսկ յեղբօրս հալացքը... Ինչքան սեր, կարեկցություն, վիշտ և հուսահատություն կար այդ հայացքի մեջ, հորը հավիտան մնաս բարչավ ասող այդ լուր վերջին հայացքի մեջ... Առավ հոր ձեռքը, ուղեց բան ասել, բայց վոչ մի ձայն դուրս չեկալ բերանից, միայն խոնարհվեց և շրթունքը կպցրեց նրա ձեռքին:

— Այս ո՞վ ե, — կամաց հարցրեց հալրս, նայելով մորս:

— Դրիգորն ե... Զես ճանաչում, — հազիվ կարողացավ արտասանել խեղճ մայրս, վորովհետեւ արտասում խեղդում եր նրան:

— Վոչ, չեմ ճանաչում. — պատասխանեց հալրս և, փոքր ինչ լուելուց հետո, հարցրեց. — հիվանդ ե:

— Ոյո:

— Յես ել եմ հիվանդ, խեղճ տղա, յես ել եմ հիվանդ. — արտասանեց հալրս, կարծես, սաստիկ կարեկցությամբ և, ձեռքը հեռացնելով Գրիգորի շրթունքից, սկսեց շոյել նրա գլուխը:

Այլևս չկարողացա դիմանալ — սիրտս պատովում եր — և շտապով դուրս գնացի, վորակեսդի այլևս վոչինչ չտեսնեմ, վոչինչ չլսեմ:

Յերբ քառորդ ժամից հետո դարձյալ ներս մտա, մայրս հորս արդեն դուրս եր տարել. Գրիգորը պառկած եր լիրեսն ի վեր և ձեռքով ծածկել եր դեմքը: Յերբ մոտեցա նրան, ձեռքը հեռացրեց դեմքից. Ինչքան վիշտ տեսա այդ դեմքի վրա... Աղերսող հայացքով նայեց ինձ և առավ ձեռքս:

— Աննա, — արտասանեց դողդոջուն ձայնով, — դու դիտես, թե ինչպես կնայիս հայրիկին ու մայրիկին: Բայց քեզնից, նրանք վոչվո՞ք չունեն. ողնիր նրանց, ինչպես կարող ես:

— Ապա սեղմեց ձեռքս, թողնց, և պատասխան չպահանջեց. չպահանջեց արդյոք նրմ համար, վոր հասկանում եր, թե վորպիսի ծանր պարտականություն եր դուռմ ինձ վրա, թե նրա համար, վոր հույս ուներ ինձնից, — չդիտեմ, միայն այդ մասին այլևս վոչինչ չխոսեց:

Նըս մահվան ներկա ելինք միայն յես, մայրս և

Թոմաս Գասպարիչը, վոր հենց նոր եր լեկել և, իմանալով թե բանն ինչումն ե, սաստիկ ախուր նստած եր մի կողմը (յեղալըներս՝ յեղանակը լավ լինելու պատճառով՝ այդ որը դուրս ելին գնացել և դեռ տուն չելին լեկել ովք գիտե վորտեղ ելին թափառում): Նա խնդրեց, վոր քահանա կանչենք, Թոմաս Գասպարիչը գնաց քահանա ի յետելից, Քահանան լեկավ, Խնչպիսի սրբազն ջերմեռանդությամբ ընդունեց հաղորդությունը... Մեռնելուց առաջ համբուրեց մորս ձեռքը, հետո — իմը, իսկ ամենից վերջին Թոմաս Գասպարիչինը, վորն, այլևս չկարողանալով դիմանալ, սկսեց լերեխայի նման լաց լինել Այնուհետև վերջին հայացքը — վշտալից, աղերսող հալացքը, — ձգեց ինձ վրա և համարյա նույն ըոպելին ել հոգին ավանդեց... Վոչ, հոգին չափանդեց, — հոգին ավանդելիս, ասում են, մարդ սարսափելի լի լինում. բայց այդպիսի բան յես բոլորովին չնկատեցի նրա մեջ, — այլ աչքերը փակեց և քննեց, քննեց, վորպիսզի այլևս յերբեք չարթնանա... Յերբ աչքերը փակեց, յես բոլորովին չելի կարծում, թե մեռավ, բայց մայրս այդ իսկույն հասկացավ: Նա նախ մի տեսակ բութ, անմիտ հայացքով մեքենայաբար նախեց ինձ, հետո թույլ, շատ թույլ ձայնով, կարծես ուժասպառ ճշաց և, գլուխը զնելով մեռած վորդու զլիսի մոտ, բարձի վրա, մի ձեռքով զրկեց նրա կուրծքը: Սաստիկ մի զող ցնցեց վողջ մարմինս. յես հասկացա, վոր յեղբալըս մեռավ: Աչքերս մթնեցին, ծընկերս թուլցան, այնուհետև վոչինչ չզգացի: Յերբ ուշքի յեկա, տեսա, վոր պառկած եմ սենյակումս՝ մահճակալիս վրա, մայրս նստած ե կողքիս՝ սառը, գունատ, չոր գեմքով, իսկ Թոմաս Գասպարիչը — դիմա-

ցը՝ աթոռի վրա վշտից սառած ու կուչ յեկած: Սկըզբում կարծեցի, թե առավոտ ե և նոր եմ զարթնում, բայց յերբ նայեցի մորս, նայեցի Թոմաս Գասպարիչին, նայեցի շուրջս, դարձյալ մորս, դարձյալ Թոմաս Գասպարիչին, — արդին լեկելությունը պարզվեց ինձ համար: Յեկ մինչեւ հիմա յել զարմանում եմ, թե այդ ժամանակ ինչպես կարողացա այնքան հանգիստ լինել. — վոչ մի հառաջանք, վոչ մի արտասուրի կաթիւ, վոչ մի զանոնություն, վոչ մի վիշտ. կարծես մեռած եյի և զգում եյի, վոր մեռած եմ: Ասում ելին կեր՝ ուտում ելի, խմիր՝ խմում ելի, հագիր՝ հագնում եյի, բեր այս ինչը՝ բերում եյի, տար այս ինչը՝ տանում եյի, արի՝ գալիս եյի, գնա՝ գնում ելի, մի խոսքով՝ անում եյի, ինչ վոր ասում ելին, և արածս վոչ հասկանում եյի, վոչ զգում, Յեկ յեթե այժմ հարցնես ինձ, թե ինչպես թաղեցինք լեղորս, ով կար հուզարու կավորությանը և ալին, — վոչինչ չեմ կարող ասել Այսքանը մրախն մութ կերպով լերպի նման հիշում եմ, վոր ինձ սկեր հագցրին, ձեռքս մի թաշկինակ զրին, թեև թաշկինակի կարիք չունելի, ձեռքիցս բռնեցին, տարան յեկեղեցի, և դարձյալ յետ բերին: Այս ել հիշում եմ, վոր յեկեղեցում համբուրեցի նրա ճակատը, դարձյալ համբուրեցի, դարձյալ... ել վոչինչ չիմ հիշում, իսկ այժմ, յերբ այդ ժամանակից անցել ե ամբողջ յերկու շաբաթ, յերբ ամենն որ մտնում եմ նրա սենյակը և ամբողջ ժամերով՝ ձեռքերս խաչած՝ նստում եմ նրա դատարկ մահճակալի վրա, — ինչ եմ զգում յես... Փառք և զոհությունն նրան, ով տնորինում ե մարդկալին բաղդը: «Աղոթքը, միախ աղոթքը կարող ե փրկել քեզ կյանքիդ ծանր բոպեներում» —

ասաց նաև Որհնյալ մինի քո հիշատակը, իմ սիրելի,  
իմ անգին յեղբարու

Անհա Սարուան.

ԺԴ

Թիֆլիս, 25 հունիսի 1881

Սիրելի Հոխիսիմե,

Նամակ ես պահանջում. ի՞նչ գրեմ, ի՞նչ ունեմ գրելու, ի՞նչ կարող եմ գրել, ի՞րք շուրջու և ներսս կատարելով զատարկություն և տիրում. վոչինչ չէա, վոչ մի հիմավոր բան, վորից կարողանալի ամուր կպչել չանհետանալու համար, վորի վրա կարողանալի վերջնականական կենդրուսացնել թափառող մտքիս ընթացքը՝ չմոլորդելու համար, Յերկակալիք մի անհուն, անտակ խորխորատ անվերջ տարածության մեջ, վորտեղ ընկել ե մարդ. նա տարածում ե ձեռքերն այս ու այն կողմը, վորպեսզի մի բան գտնի, վորից կարողանա բռնել՝ ավելի խորը չընկնելու համար, բայց միշտ հանդիպում ե զատարկ տարածության, և նա շարունակ ընկնում ե ցած, ընկնում ե անվեջ, մինչև անգամ վոտների տակ հատակ չգտնելով. — չես այդ դրության մեջ եմ: Ճշմարիտ ե, կա իմ մեջ զգացմունք, վորի համար պարտական եմ մեռած յեղբօրս, և թեև զգացմունքը շատ անգամ բարերար ներդործություն ե ունեցել տանջված հոգուս վրա, բայց... անգին քուրիկ, հասկանում ես, թե վորքան յերիտասարդ եմ իս դեռ և թե սիրտս, հոգիս բնականարար դեպի ինչը պիտի ձգտեն, Յես... Այս, բավական ե. թողնենք այս, այլս սիրտ չկա:

Յեղբօրս մահն, ինարկե, անհետեանք չեր կարող

անցնել վոչ ինձ և վոչ մորս համար՝ մանավանդ մեր այս թշվառության ժամանակ: Մաքրս անմիջապես ընկալ անկողին և մոտ մի ամիս շարունակ պառկած եր: Նրա և հորս միակ խնամատարն յես ելի, թեեն լես ել պակաս հիվանդ չելի զգում ինձ: Նրա անկողնից վեր կարծես դիտմամբ իրար խոսք ելինք տվիլ ալդպես անելու: Յես նրանցից ավելի կարճ ժամանակ ելի պառկած և ահա մի շաբաթ ե, ինչ վեր եմ կացնել Այժմ ինձ աստիկ թուզ եմ զգում. յերկար չեմ կարողանում ման գալ կամ վորկիցն բան շինել. շուտով հոգնում եմ, ուզում եմ նստել կամ թիկն տալ, Գրիչն ել ալժմ զժվարությամբ եմ շարժում ձեռքիս: Անցյալ որը նայեցի հայելում, և ինքս իձնից սարսափեցի: Ակամա վերցրի անցյալ տարրվա լուսանկարս և համեմատեցի. — ինչքան փոփոխություն..., չելի ուզում հավատալ թե ալդքան փոփովել եմ: «Կամ այս իմ լուսանկարս չե, կամ թե հայեցին ե ինձ խարում» — ասում ելի ինքս ինձ: Լուսանկարը ներկայացնում ե մի գեղեցիկ, մի կայտառ որիորդ, վորի աչքերն յերջանկությամբ և չարաճճի կերպով ժապառ են, իսկ հայելու մեջ տեսնում եյի սաստիկ նիհար, սաստիկ գունատ, կարծես ծերացած մի աղջիկ, վորի անկենդրան, մեքենայական հալացքը կարծես, ասում ե... ի՞նչ ե ասում. — վորոշ վոչինչ, բայց մի բան տասում ե, վոր վոչ ինքն ե հասկանում, և վոչ ուրիշը կարող ե հասկանալ... Դառնացած գեն շպրտեցի լուսանկարս և հեռացած հայելուց...

Այստեղ սաստիկ շոգեր են: Ամառանոցի սովոր լենելով, շատ զժվարությամբ եմ կարողանում դիմանալ Համարկա վողջ որը սենակիցս դուրս չեմ գալիս:

Միայն գիշերներն և առավոտյան կարողանում եմ ազատ ոդ շնչել Ներից, սիրելիս, ասստիկ հոգնեցի. ել վոչինչ չեմ կարող գրել:

Ընդունիր կարոտալի համբուլըներս.

Քո Աննա Սարոյան.

ԺԵ

Թիֆլիս, 27 հուլիսի 1881

Սիրելի Հոհիսիմե,

Այժմ փառք Աստուծո, բավական լավ եմ զգում ինձ, միայն շոգերն են սաստիկ նեղացնում, Յերբեմն յերեկոները, լավ յեղանակներին, գուրս եմ զնում փոքր ինչ զբոսնելու և շուտով ել վերապառնում եմ. Հարցնում ես՝ մթիթե յեղբայրներս դարձյալ պարապ են: Վոչ. մեր նախկին հարուստ «բարեկամներից» մեկը վերջապես «իսղճաց» մեղ և յերկուսին ել ընդունեց իր մագաղինը, բայց այն պայմանով, վոր նրանք իրենց լավ պահեն: Ցիկ այժմ, փառք Աստուծո, նրանք տակավին իրենց լավ են պահում, և յիթե բանը այդպես գնա, մենք գոն կլինենք: Այդ շատ լավ յեղավ. յեթե յեղբայրներս դարձյալ պարապ մնային, հավատա, վոր քաղցած կմեռնեյինք: Մորս հիվանդության միջոցին մեր վերջին կոպեկները ձեռքներիցս զնացին, և մենք մնացել ելինք տարակուսած՝ թե ինչ պիտի անենք: Այժմ յեղբայրներիս գործի կանգնելով, կարող ենք փոքր ի շատե տանելի կլանք ունենալ:

Յես արդեն վերջնականապես հաշովել եմ զրությանս հետ, ներկան ինձ այնպես սարսափելի չի թվում, ինչպես յերեակալում ելի առաջ: Միայն լեզրում վա-

ղահաս մահը սրտիս մեջ թողել ե մի այնպիսի խոց, վոր յերբեք և վոչ մի բանով չի կարող ռուժվել Ամեն որ, ամեն ժամ, նա, կարծես կենդանի կանգնած և աշշքիս առաջ, իսկ յերազումս համարյա ամեն գիշեր տեսնում եմ նրան: Նրա սեռնելուց հետո առանց տանջվելու չեմի կարողանում մոտենալ նրա գրքերին ու տետրակներին: Ամեն անգամ, վոր տեսնում եմի այդ գրքերն ու տետրակները պահարանում դարսած, իսկույն մի տեսակ սաստիկ-սաստիկ ճմլիքում եր սիրտս և անցյալի հիշողությունները մեկ մյուսի յետեից ակամա զարթնում ելին իմ մեջ: Բայց յերեկ — չզիտեմ ինչպէ — սիրտս ճգտում եր գեպի այդ գրքերն ու տետրակները. ուզում ելի քրքրել նրանց, ուզում ելի թերթել, ուզում ելի ծայրե ծայր կարդալ տետրակները, և ինձ թվում ե, թե այդպիսով նա ինքը՝ կենդանի կանգնած իմ առաջ՝ խոսելիս կլինի ինձ հետ: Այդ պատճառով մոտեցա պահարանին և բաց արի զուռպ: Գրքերն ու տետրակները դարսված ելին իրենց կարգով, այնպես, ինչպես նա վերջին անգամ ինքն իր ձեռքով դարսել եր: Կարդապահությունն ու մաքրությունն առնասարակ նա սաստիկ սիրում եր, և յես յերբեք չելի տեսել, վոր նրա գրքերը կամ տետրակները խառն ե խուռն թափկած լինելին: ամեն ինչ իր տեղը, ամեն ինչ մաքուր: Բայց այդ անգամ գրքերի և տետրակների վրա բավական փոշի յեր նստել: «Իսկ նրա վրա ահագին շերտ հող եր նստած»—մտածեցի յես, զողդյուն ձեռքով մի առ մի վերցի գրքերն և սկսեցի փոշին սրբել: Այդ վերջացնելուց հետո, վերցրի բոլոր տետրակները, ցած քերի և, նախապես նրանց վրայից ել փոշին սրբելով, սկսեցի մի առ մի թերթել: Այդ

բայրն ուսանողական տեսրակներ ելին, վորոնց մեջ իրեն հատուկ մաքուր և գեղեցիկ զընթով գրել եր գասերը։ Այդ տեսրակների մեջ գտա և նրա հիշատակառանը։ Ինչպես մի անգին գյուտի վրա, վրա լնկա ալդ տեսրակին և անգին հետաքրքրությամբ ոկսեցի թերթել Ա՛խ, ինչպես արոփում եր սիրտա, ինչպիսի տանջանքով և սիրով սիզում ելի այդ տեսրակը սըրտիս, ինչպես ջերմագին համբուրում ելի այն և թրջում արտասուրքով.. Մի անգամ, էերբ կդաս ալստեղ, սիրելի Հոիփսիմե, ալդ տեսրակը կկարդամ քեզ մոտ, և կտեսնես, թե ինչպիսի տղա եր նա, այդ տեսրակի մեջ նա թափել եր իր բոլոր միտքն ու հոգին, Բայց ալժմ իս այնտեղից կարտազրեմ նրա բանաստեղծություններից մեկը (հիշատակարանի մեջ բավական թվով բանաստեղծություններ ել ունի գրած), վոր, ինչպես ամսաթիվը ցուց ե տալիս, նրա վերջին գրածն ե և գրել ե մահից մի շաբաթ առաջ։ Այդ բանաստեղծությունը մի ամփոփ գաղափար կտա քեզ նրա հոգեկան աշխարհից։

Հասել ե ֆամը։ Շուտով նորաբաց,  
Մանուկ արևս պիտի խավարի.  
Դեռ կյանք չտեսած, գեռ չվաստակած՝  
Մարմինս հողը պիտի ավերի։  
Ա՛խ, ինչպես, ինչպես ուզում եմ ապրել,  
Ապրել և գործել, գործել և տոկալ,  
Ինչպես ջերմագին ուզում եմ սիրել,  
Ամենքի համար աղոթել և լալ...։

ԽԵղճ, անբաղդ լեղբայր... Ի՞նչպիսի կյանքի ծառավ, ինչքան անկեղծ, խոր զգացմունք, ի՞նչքան

տանջանք... Միթե ալդպիսի լեղբորը յերբեկ կարելի յե մոռանալ, իմ անգին քուլըիկ։ Յերեկվանից զես անընդհատ մտածում հմ նրա մասին և վորքան շատ եմ մտածում, այնքան ավելի յեմ զգում, թե վորքան մեծ և անփոխարինելի յե իմ կորուստը։ Գիշերս բոլորովին չկարողացա քնել, ակամա արտասուրքը հանդարտ հոսում եր աչքերիցս և թրջում եր զեմքս, անկողինս — և յես զողողուն ձեռքերս սաստիկ հուսահատությամբ ու տանջանքով տարածում ելի ողի մեջ գոնե նրա ուրվականը գրկելու համար... Ա՛խ, նրա հիշատակարանն ամեն ինչ տակն ու վրա արեց իմ մեջ։ Դարձյալ սկսում եմ առաջվա նման... Վհչ, ալիս վոշնչ չեմ գրի այս մասին. միշտ միւնըւն լերդը... Գուցեց արդեն ձանձրացրել եմ քեզ։

Մնաս բարով, իմ սիրելի քուլիկ, ցնոր գրություն։  
Քո Աննա Սարոյան.

## ԺԶ

Թիգլիս, 16 սպոտոսի 1881

Սիրելի Հոիփսիմե,

Խորհուրդ ես տալիս, վոր շատ չհոգվեմ, և ինդրում ես, վոր լեղբորս հիշատակարանն ուղարկեմ քեզ, վորպիսպի ալիս տեղիք չունենամ հուզվելու։ Յես ել եմ համեանում, վոր շատ հուզվելը ներկա գրությանս մեջ ինձ լիւաստակար ե, բայց մի վախենա, հիշատակարանը գտնելուս առաջին որն եր, վոր այնպիս հուզվում ելի, ալժմ ինձ զսպում եմ։ Աւրեմն, սիրելիս, հիշատակարանը կմնա ինձ մոտ, վող կլանքումս չեմ բաժանվի նրանից, չեմ բաժանվի այն պատճառով միայն, վոր նա ինձ համար անգին ե և միշտ ել անգին կմնա։

Դարձյալ բանը թարսվեց և մեծ լեղբալրս իր հին

աստվածը միտը քերեց. Մերսը արեկամնաել վոնդեց նրան,  
և իրավունք ուներ, վորովհեռ և յիղբալրս դարձալ սկսել  
եր խմել. ստացած ոռճկից ել վոչ և ի կոպեկ տուն չեր  
բերում: Ե՞ն, այդպիս ել կարծում ելի. արբեցողությունն  
այնպիս չե բուն դրել նրա մեջ, վորնա լերքե կարողա-  
նա դրանից ձեռք վերցնել: Դրա համար կամք ե հար-  
կավոր և փոքր ինչ ժուժկալություն, իսկ լեղբայրս  
զուրկ ե թե մեկից, թե մյուսից, անգործ մնալն ու  
խմելը նրա համար ամեն բանից քաղցր ե: Իսկ փոքր  
յեղբայրս դարձյալ այնտեղ ե ե, պիտի ասած, կարու-  
ղացել ե ծուլությունը հաղթել և աշխատում ե: Բայց  
նրա ստացած ոռճկին ի՞նչ պիտի անի մեր այնքան,  
թեկուղ սաստիկ չափավորված, կարիքներին, Ծայրա-  
հեղ աղքատությունը սպառնում ե թակելու մեր դուռը...  
Մայրս ուղում ե տունը ծախել, բայց յես չեմ թող-  
նում, դրանից ստացած փողն ել շուտով կհատնի (մա-  
նավանդ), վոր տունն անհամեմատ պակաս են գնահա-  
տում), այնուհետև ի՞նչ պիտի անենք, ի՞նչ պիտի  
վճարենք բնակարանի վարձ... Վո՞չ. անմտություն  
կլիներ հոգսերի վրա նոր հոգսեր ավելացնել: Յերեա-  
կալում եմ, թե վորքան դժվար ե մի տնից մյուսը  
տեղափոխվել, թե վորքան անտանելի յե տանտիրու-  
ջից միշտ անարգված լինել՝ տան վարձը ժամանակին  
չվճարելու համար... Վոչ, հազարապատիկ ավելի լավ  
ե մեռնել թեկուղ քաղցած, բայց ականջը հանգիստ՝  
սեփական տան հարկի տակ: Սեփական տանը, սեփա-  
կան տանը... ուրիշ տեղ կլանքը կրկնապատիկ, քառա-  
պատիկ դառը կլինի: Յես այդ զգում եմ: Մայրս ու-  
ղատիկ դառը կլինի: Յես այդ զգում եմ: Մայրս ու-  
ղատիկ դառք կանքնել Տեսնենք ի՞նչ կլինի  
զում ե մի վորքեա գործ վերցնել: Տեսնենք ի՞նչ կլինի  
փո Աննա Մարտիան.

ԺԵ

Թէ Փլիս, 24 ոդուտոսի 1881

Սաստիկ հուզված եմ զրում քեղ այս տողերը, սկ-  
բելի Հոիփսիմե: Յես ալժմ կատարելապես վոչնչացած,  
եմ: — Մայրս կար եր վերցը ել կարելու, յես ել ոգնում  
եյի նրան, բայց... վոչինչ չկարողացա կարել, ալի կարել չգիտելի,  
կարը փչացրի: Կար բաժանող կլինը տեսավ կարս և հան-  
դիմանեց նախ մորս, վոր ինձ թողել եր կարելու, հետո  
ինձ, վոր կարը փչացրել ելի: «Ահազին աղջիկ ես և ամե-  
նահասարակ կար անգամ չգիտես, ամոթ օշն» — ասաց:

Ամոթ չե... Այնքան ամոթ եր, վոր հազար յերանի  
կլիներ, յեթե նույն բոպեինը գետինը պատովեր և  
կլաներ ինձ հավիտան... Մինչև անգամ մտադրեցի  
ինքնասպանություն գործել և կործելի, աստված ե  
վկա, կործելի, յեթե... Ամեն տեսակ դժբաղդություն,  
ամեն տեսակ բաղդի հալածանք կտանեյի — և տանում  
եմ — բայց հասարակ կնոջ այդ հասարակ բանի հա-  
մար տված հանդիմանությունը վոչ մի կերպ չեյի տա-  
նի և չեմ կարող տաներ Այ, հանդիմանությունը մըտ-  
քից մի վարկան անգամ չի հեռանում և վորքան  
զատ եմ մտածում այդ մասին, այնքան... սիրտս ան-  
տանելի՛ ծանրանում ե... Կարծում եմ, թե ամբողջ  
մարդկությունն աշխարհիս ամսն ծալրից, մինչե ան-  
գամ տան չորս պատերը, վորոնցից ալես զուրս չեմ  
գալիս, ծաղրելով մատնացուց են անում ինձ և ասում,  
— տեսնք, այս ահազին աղջիկը հասարակ կար անել  
անգամ չգիտե... Ի՞նչ մեծ համարում ունեի ինձ վրա:  
կարծում եյի, թե բավական ե, վոր մի բան անել կա-

մնամ — և վերջացած ե, ամեն բան կանեմ, բայց  
իրողությունը, փորձը ցուց տվեց, վոր վճէ թե վո-  
չինչ չիմ կարող անել, այլ և... վոր յես ինքս վոչինչ  
եմ, վոչինչ, վոչինչ... Յեվ դեռ մի անգամ մեռած յել-  
րորս հպարտությամբ պատասխանեցի. «Ի՞նչ, իս կաշ-  
խատեմ... խեղճ, խեղճ Աննա... Յեվ լեզբայրս ել  
հույս ուներ ինձնից, թե կարող եմ աշխատել... Վո՞,  
վորքմն անտանելի լե դրությունս... Ինքս ինձնից  
սարսափում եմ, Գոնե չունենայի սրտիս մեջ՝ դեռ  
մանկությանս հասակից սերմանված հպարտությունը,  
այս գոռոզությունը, գոնե կարողանալի տանել ինձ  
տված արդարացի հանդիմանությունները, գոնե սիրտս  
կարողանար հաշտվել ուղեղիս հետ, — այս ժամանակ...  
իսկ արժմ... կատարելապես իրավունք ունեմ ասելու,  
վոր յես իսկապես թշվառ եմ... Այս, այս, անգին  
քույրիկ... սրտիս և ուղեղիս մեջ դժոխք կա...»

Թռ Ա. Ս.

ԺԲ

Թիֆլիս, 9 սեպտեմբերի 1881

Սիրելի Հոփիսիմե,

Աղքատ տեղովդ ինձ քսան ոռորդի յես ուղարկել  
ինչու ինչու յես ուղարկել. և դեռ ներողությունն ել  
ես խնդրում, վոր ուշ ես ուղարկում, վորովհետեւ ոռ-  
ճիկդ նոր ես ստացել... Բայց քեզ ո՞վ ասաց, վոր  
ուղարկես... նպատակդ ինչ եր, վոր ուղարկել ես...  
ինձ ծաղրել ինձ հանդիմանե՞լ... Այո՞... Կարծիս թե  
ինքս ինձ քիչ եմ ծաղրում, կարծիս թե ինքս ինձ քիչ  
եմ հանդիմանում... Յեվ գրում ես, վոր շնորհակալու-

թյուն չգրեմ քեզ Միթե կարծում ելիր, վոր շնորհակալու-  
թյուն կրրեմ — ինչ բանի համար. — վոր տանջանքս կը ըկ-  
նապատեցիր... վոր ինքս ինձ ավելի տաել տվեցիր...  
վոր մի անգամից ցուց տվիր, թե վորքան չնչին և  
անպետք եմ յես՝ քեզ հետ համեմատած... Յերբ բաց  
արի ծրաբը, հանեցի միջից ուղարկածդ թղթադրամ-  
ները և կարդացի Շամակդ, — արյունս գլխիս խփեց,  
կատաղությունից, ամոթից ու անզորությունից լաց  
լեղա... աստված իմ, այն ինչ արտասուզ եր... Կյան-  
քիս մեջ դեռ այսպես լաց չելի լեզել, արտասուզիս լու-  
րաքանչչուր կաթիլը, կարծիս, թուն եր, վոր քամվում  
եր ուղղակի սրտիցս... Անդին քույրիկ, այս ինչ ե պա-  
տահում ինձ:

Թռ Աննա Սարովան.

Հ. Գ. Նամակիս հետ յետ եմ ուղարկում ուղար-  
կածդ քսան ոռորդին. Անշուշտ հասկանում ես ինձ և  
չես նեղանալ, վոր այդ փողերը չեմ ընդունում:

Ա. Ս.

ԺԲ

Թիֆլիս 15 սեպտեմբերի 1881

Դարձյալ, դարձյալ ուղարկել ես և հետն ել մի յեր-  
կար հանդիմանություն. Այս, այն, սիրելի Հոփիսիմե,  
համաձայն եմ քեզ հետ, վոր յես շատ հպարտ եմ,  
շատ փոքրոգի և շատ հիմար, բայց... հավատա, վոր  
ավելի մեծ բարեբարություն արած կիննելիր ինձ, յե-  
թե այդ փողերը սկզբից չուղարկելիր. Զես կարող  
լերիվակալել, թե ինչպես տանջվում եմ յես, լերը նա-  
յում եմ այդ փողերին... Անուամենայնիվ ընդու-  
նում եմ, բայց այն պայմանով, — ուղարկություն

դարձրու, — այն պայմանով, վոր այդ իմ պարտք ս  
լինի և յես այսոր թե եգուց, բայց մի ժամանակ  
անպատճառ վերադառնեմ քեզ, Գրիր, վոր  
այդ պայմանին համաձայն ես, ապա թե վոչ, դարձ-  
լալ իտ կուղարկեմ: Մինչև գըելդ այդ փողերից մի  
կոպեկ անդամ չեմ ծախսի:

### Քո Աննա Սարոյան.

Ի

Թիֆլիս, 19 սեպտեմբերի 1881

Սիրելի Հռիփսիմե,  
Շնորհակալ եմ:

### Քո Աննա Սարոյան.

ԻԱ

Թիֆլիս, 4 հոկտեմբերի 1881

Սիրելի Հռիփսիմե,

Ի՞նչ ես ուզում, վոր գըեմ: Թե ինչպես եմ անցկաց-  
նում ո՞րս: Կզակս ափիս հենած՝ առավտից մինչև յե-  
րեկո նստած եմ լուսամուտի առաջ և յեթե յերեմն  
պատահում ե, վոր մի վօրեն ձանձ ցրտից անզորացած՝  
ման և գալիս ապակիների վրա, բռնում կամ գլուխն  
եմ կտրում, դեն գցում, կամ թեվերն ու վոտքերը  
կտրում ու թողնում, վոր թավալովոր գա այդպես  
անդամանատված, մինչև վոր սատկի... Մրանից ել  
լա՞վ զբաղմունք: Ժամանակ չե՞ն, թող անցնի, ուրիշ  
կերպ չանցնի, թող այսպես անցնի, ի՞նչ վնաս, վերջը  
խո մահ ե...

Քո Ա. Ս.

ԻԲ

Թիֆլիս, 18 հոկտեմբերի 1881

Սիրելիս,

Իզուր ես ինձ յերկար ու բարակ խրատներ կարդում.  
Իզուր ես աշխատում ապացուցել ինձ, վոր իմ այս  
խելքով, հասկացողությամբ յես չեմ կարող, չպետք ե  
այսպիս լինեմ, վոր իտ զոռո և եմ ալդպես անում և անար-  
դարացի կերպով չարախսում ինքս ինձ վրա: Յես ին-  
քըս ել այդպես եմ կարծում, բայց արի տես, վոր անի-  
ծալ իրականությունը խելք և հասկացողություն չի պա-  
հանջում, այլ կյանքի համար պատրաստություն.  
Եսկ հենց այդ բանն ե, վոր յես չունեմ, բայց թե  
ինչու չունեմ, — այդ ինքը ել շատ լավ կարող ես հաս-  
կանալ, յեթե քրքրես անցյալս և դաստիարակու-  
թյունս... Միանգամբից համոզի՛ր, վոր յես կանքի  
համար մի կոպեկ, մի գոռշ անդամ չարժեն: Կրկնում  
եմ յես անպատրաստ եմ, անպատրաստ, — այս յերբեք  
մի մոռանար: Իսկ նոր պատրաստիվ այժմ անհնա-  
րին ե, ուշ ե, ինչպես սկզբաց հիմքը գցվել ե,  
այնպես ել պետք ե գնա մինչև վերջը: Յեվ թող  
գնա: Յես հրաշքներ չեմ սպասում և վոչ ել ինքս  
կարող եմ հրաշքներ գործել Յես մի ալանդակ ա-  
րարած եմ, վորի բերանը հայը ծամած պիտի դնել...  
Վորքան ատում եմ ինքս ինձ, վորքան զղվում եմ ինքս  
ինձնից... Յեթե հնար լիներ սոսկալի մեղապարտութ-  
յունից խուսափելու...

### Քո Աննա Սարոյան


ԻԳ

Թիֆլիս, 31 հոկտեմբերի 1881

Իմ անդին Հռիփսիմե,

Այս տողերը զրելիս արդեն թույն եմ խմել, իսկ

Երբ կարդալիս կլինես, անշուշտ այլիս կհնդանի չեմ  
լինի. Մսաս բարյավ... հալիտյան... ել ինձ շես տեսնի:  
Ասիծիր ինձ, բայց լայ լեզիր. արցունքդ դուցե թե-  
թեվացնի մեղապարտ հոգիս... ի՞նչ սոսկալի բան ե  
թույնը... Բայց կյանքը ափելի սոսկալի լի ի հարկե  
ինձ համար, իսկ քեզ և ուրիշների համար — վոչ. հա,  
կարծեմ արդեն ստացած պիտի լինես մի քանի որ առաջ  
իմ քեզ ուղարկած քսան ոռւթին, վոր պարտք ելի քեզ.  
Ներիր, հպարտությունս հաղթուր Ալս նույն հպարտու-  
թյունն ե, վոր ինձ գերեզման առնում: Արդյոք կների  
ինձ աստված, կների՝ Դրիուն է պին... Բայց ապրեն  
ինձ համար անհնարին եր. Դարձար մաս բարյավ, ան-  
նման քույրիկ, աղոթք արա մեղապարտ հոգուս համար:



## ՎՐԻՊԱԿ

Գրքիս մի ժամկ 6-րդ և 9-րդ եջում սպրուել են հետեւյալ վրի-  
պակները.

1. 6 որդ եջի ներքեկից 3-րդ տողում կը կնվող 1888-ը պետք  
ե լինը 1889:

2. 9-րդ եջում տպված ե ճմլվող բուրժուազիայի, պետք ե  
լինի ճմլվող մանը բուրժուազիայի:

6

55

ՀՀ Ազգային գրադարան



NL0927586

45 4.

ԿԱԶՄԸ 25 Կ

19

1

3378



НАР-ДОС

Лина Сароян

ГИВ ССР Примория Эрлангъ